

Առաջաբան

*«Չարիքներով խոցոտվում ենք,
բայց անհոգ ենք առողջների պես»
(Յովհան Մանդակունի)*

Մարդուն տրված՝ Աստծո մեծագույն պարգևներից մեկը որդեծնության շնորհն է: Մարդ արարածն իր գեներտիկական անմահությունը տեսնում է առանձնապես իր զավակների և ընդհանուր առմամբ բոլոր սերունդների առողջ ու առաքինի հաջորդականության և անվերջ շարունակականության բարեշրջման մեջ: Մարդու կյանքի մեծագույն դժբախտություններից մեկը սերնդագործելու աստվածատուր պարգևից զուրկ լինելն է, որ անսփոփ տառապանք է պատճառում ցանկացած անհատի: Մարդը տառապում է, որովհետև այստեղ իր գեներտիկական վախճանն է արձանագրվում: Աստված բոլոր ժամանակներում իր սիրելիների ու հավատարիմների սերունդներին խոստանում է ավագահատիկների ու երկնքի աստղերի չափ բազմացնել, բայց և նախանձախնդրորեն կորստյան է մատնում բոլոր այն ազգերին ու ժողովուրդներին, որոնք այլասերման ճանապարհով ինքնապղծման են գնում ու ապականում շրջապատը, որովհետև ուն շատ է տրվում, նրանից շատ էլ պիտի պահանջվի: Եվ այս վերջինի՝ ունեցածի կորուստն ավելի ցավալի է, քան բնավ չունենալը:

Թանկագին հայրենակիցներ, հարգելի բարեկամներ. հասարակության մերօրյա կյանքի ամենացավալի կետերից մեկը մատաղ սերնդի ազնիվ ու բարոյական կրթադաստիարակության աղետալի վիճակն է: Բոլորս էլ սրտի խորքում ակամայից տանջող կսկիծ ենք զգում, երբ լսում ենք մարդկության ապագան կառուցող մեր երիտասարդության շարքերում ծավալված հանցավոր իրողությունների մասին: Իսկ դրանք բազմատեսակ են ու բազմաբնույթ՝ անբարոյականություն, անառակություն, գողություն, հարբեցողություն, թմրամոլություն ու առաքինությանը վնասող ամեն մի արատ:

Արդ, երբեմնի առաքինություններով զարդարված հայի սերունդն այլասերման անդունդի եզրին է այսօրվա դեմոկրատիայի շուկայական կյանքում: Կյանք, որտեղ ամեն ինչ առուծախի ենթակա է, անգամ խիղճն ու բարոյականը: Եվ ամենավտանգավորն այն է, որ տակավին օրորոցում մեր մանուկներին կլանում է փողասիրության մոլուցքը: Նրանց հետ օրըստօրե զարգանում ու հրեշավոր կերպարանք է ստանում ամեն ինչ դրամին զոհաբերելու ահավոր ընդունակությունը:

Ոչ ոք նյութականի անհրաժեշտությունը չի բացառում, առավել ևս մերօրյա սուղության ու ավելին՝ աղքատության պայմաններում: Բայց այլ է անհրաժեշտ նյութականի պահանջը, որ ներդաշնակորեն իր տեղն ունի կյանքի մյուս կարևոր երևույթների շարքում և միանգամայն այլ է նյութապաշտության հասնող փողասիրության մոլուցքը, որ մատաղ սերնդի նորաբողբոջ հոգում ապականում է ամեն մի Սրբություն:

«Ունենք կերակուր և հանդերձներ և դրանով պիտի բավականանանք: Իսկ ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձության և որոգայթի և բազում անմիտ ու վնասակար ցանկությունների մեջ, որոնք ընկղմում տանում են մարդկանց դեպի կործանում և դեպի կորուստ. որովհետև բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, որին ոմանք ձգտելով՝ վրիպեցին հավատից և իրենց զգեցին բազում ցավերի մեջ» (Ա Տիմոթ. 6: 8-10):

«Ճշմարիտ են ասում ձեզ, որ մեծատունը դժվարությամբ կմտնի երկնքի արքայությունը: ...Ավելի հեշտ է, որ պարանն ասեղի ծակով մտնի, քան թե մեծատունը՝ Աստծո արքայությունը»: «Մարդկանց միջոցով այդ անկարելի է, բայց Աստծո միջոցով ամեն ինչ կարելի է» (Մտթ. ԺԹ 19:24, 26):

Հարուստ կարելի է լինել, բայց կիրթ լինելը չի կարելի բացառել, դեռ ավելին, կիրթ լինելով մարդ ձեռք է բերում բոլոր գանձերից ամենաթանկարժեքը՝ բարոյականությունը: Իսկ բարոյական լինելու համար հարստությունն անհրաժեշտություն չէ: Չմոռանանք, որ թագավորներն ու կայսրերն անգամ, որ գրեթե ոչնչի կարիք չէին զգում, երբեմն մշտապես տառապում էին իրենց զավակների անառակությունից և խորապես մտահոգված էին նրանց բարոյական նկարագրի վերականգնման խնդրով, հոգ էին տանում պետության տարածքում կրթական մակարդակի բարձրացման մասին:

Ահա թե ինչ է ասում Ջոնի մեծ կայսրերից մեկն իր կնոջն ու դստերն ուղղված խրատական նամակում. «Ո՛վ Ջոն, չեմ ողբում վրադ, որ պալատներդ ավերվել, պարիսպներդ փլվել են, անտառներդ այրվել, բնակիչներդ պակասել են: Դրանց վրա չեմ լալիս, որովհետև ինչպես ժամանակը բերում, այնպես էլ տանում է այդ ամենը: Բայց ողբում ու ողբում եմ վրադ, տեսնելով քեզ, քո հայրերի առաքինություններից ու նրանց կրթությունից զուրկ: Կորավ, վերջացավ մեր հայրենիքը՝ երբ որ տղա ու աղջիկ զավակների կրթությունը պակասեց: Տղաները լրբացան, աղջիկներն ամոթխածությունը մի կողմ դրեցին ու մայրերն անպարկեշտ եղան:

Օ՛, կար ժամանակ, երբ մի հայրը քսան որդի և մի մայրը նույնքան դուստր կրթելուն բավական էր, իսկ հիմա քսան հայր մեկ որդի և քսան մայր մեկ դուստր կրթել չեն համարձակվում:

Էթնա հրաբխային լեռը սիցիլիացիներին այնքան չի վնասել, որքան մի անհամեստ կինը հռոմայեցիներին: Անիծյալ լինի նա, ով արծաթ ու ոսկի խոթեց Ջոնի մեջ, ով որ Ջոնին հարստացրեց գանձով և աղքատացրեց առաքինությամբ»։ (Բազմավեպ)

«Եվ մի ասա՛, թե չեմ պոռնկանում, որովհետև ահավասիկ ընչասեր ես: Տես ճնճղուկը թեև ոչ ամբողջ մարմնով, այլ մի ոտքով է բռնվում թակարդում, բայց կորստյան է մատնվում» (Ոսկեբերան):

Երբ բազմաթիվ ապականող երևույթների արդյունքում կրթության գործն ու բարոյականությունն է վտանգվում, ապա ողբերգական վախճանն այլևս անխուսափելի է թվում:

Այո՛, մեր բարոյակրթական համակարգն այսօր առավել քան վտանգված է, և այլասերման վտանգին է ենթարկված բարոյական նկարագիրը: Կարող ենք համարել, թե պատճառը տնտեսական անապահով պայմաններն են, թե ծնողներն օրվա հացի խնդրով տարված տեսադաշտից դուրս են թողնում երեխաներին, թե ուսուցիչները չեն վարձատրվում ու անտարբեր են դարձել կրթության հանդեպ, թե գրքեր չկան, կամ եղածը շատ թանկ է, և սա է դպրոցի ձախողման հիմնական պատճառը: Թերևս սրանք մեծ խոչընդոտներ են, բայց ոչ անշուշտ գլխավոր պատճառը, որովհետև դեռ ոչ վաղ անցյալում, երբ նյութական ամեն ինչ ավելի քան կայուն էր, դպրոցն արդեն իսկ սկսել էր գահավիժել և չպետք է մոռանալ, որ առաքինությունն ու ազնվությունը հոգեկան ինքնաբուխ երևույթներ են, որոնք նյութական որևէ արժեքով պայմանավորված չեն: Չախողման հիմնավոր պատճառն այն էր, որ ընտանիքներում սկսեցին շշնջալ, թե հարուստ լինելու համար կիրթ լինելը կարևոր անհրաժեշտություն չէ: Ի դեպ սա անխուսափելի էր, որովհետև նախկին ձախողակ հասարակարգում իդեալը սահմանափակ նյութապաշտական անաստվածությունն էր, որտեղ մարդու կյանքի նպատակն սկսեց որովայնից այն կողմ չանցնել: Եվ փողասիրության կռապաշտ բաղձանքը դարձավ պատանիների ու աղջիկների կյանքի գերագույն նպատակը, որպես վեհության զգայարանների քիչ-քիչ խցանման արդյունք: Իսկ այս թվացյալ բարձունքին, որ ըստ էության կործանարար անդունդ է, կարելի է հասնել բազմաթիվ միջոցներով, նույնիսկ Հիպոկրատին երդում տվող բժշկության միջնորդությամբ չճնված երեխայի «օրինականացված» սպանությամբ:

Սույն գրքույկը հարգարժան ուսուցիչ մանկավարժներին, մեր շատ սիրելի հայրերին ու մայրերին, բժիշկներին ու հոգևորականներին նվիրելով՝ նախաբանի խոսքն ուզում եմ ավարտել հայ մեծ երգահան-մանկավարժ և այդ ասպարեզներում իր անօրինակ նվիրումով Չայ Առաքելյան Սուրբ Եկեղեցու հպարտությունը դարձած Կոմիտաս վարդապետի հետևյալ խոսքերով. «Ուսուցիչ պարոններ՝ ու քույրեր՝, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցե՛ք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է: Սխալ ուղղությամբ՝ ազգ մը կը խորտակեք վերջը: Երանի՛ թե օգտակար ըլլալի»։ (Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչեն, Մոնթրեալ 1994թ., էջ 214):

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԿԱՅՈՒՄ Է ԱՍՏԾՈՒ ՄԱՍԻՆ

«Երկինքը պատմում է Աստծու փառքը» (Սաղմոս 18.2):

Սիրելի՛ ընթերցող, այսօր քսանմեկերորդ դարի շեմին ենք գտնվում: Քսաներորդ հարյուրամյակը կարելի է գիտության դար համարել, քանզի այս վերջին հարյուր տարում այն աննախընթաց վերելք ապրեց և բազմաբնույթ հնարավորություններ ընձեռեց մարդկությանը ինքնաճանաչման ու աշխարհճանաչման ճանապարհին: Անշուշտ, քսանմեկերորդ դարում էլ նոր վերելքներ են կանխատեսվում:

Աշխարհի տարբեր երկրներ ունեցան իրենց ուրույն զարգացումը՝ սկսած խիստ կրոնական երկրից և վերջացրած ամենամաստվածով: Ի դեպ աստվածամերժները մարդկային ցեղն անձայր տիեզերքում համարեցին մի «պատահական կապկի» սերունդ, որն էլ իր հերթին իբր հետևանք էր սկզբնական նյութի, որի սկիզբն անհասանելի է մատերիալիստ գիտնականներին:

Եհիշտ է, միայն եռաչափ տարածությունը մասամբ ճանաչող մարդկային սահմանափակ գիտակցությունը, որը, իհարկե մեր ողջ հնարավորության միայն տասնվեց տոկոսն է, որից մարդն օգտվելու հնարավորություն ունի իր առօրյայում, չկարողացավ ցույց տալ նաև իր աստվածային նախասկիզբը, որովհետև աչքերը փակող մարդուն կուրացուցիչ լույսն անգամ հնարավոր չէ ցույց տալ: Բայց փառք Աստծո, այսօր գիտության, կրոնի ու մշակույթի համադրությամբ հաստատուն քայլեր են կատարվում ինքնաճանաչման բազմախոչընդոտ ճանապարհին: Այս են վկայում գիտնականի կոչում ունեցող ամերիկացի տիեզերագնացի, լուսնի վրա առաջին անգամ ոտք դրած մարդու՝ Լուի Արմսթրոնգի այն խոսքերը, որ նա արտասանեց տիեզերանավից լուսնի վրա իջնելու պահին. **«Տե՛ր Աստված, մենք մենակ չենք»:**

Այո՛, մեծ հայտնագործության պահին նա հիշեց Աստծուն, որի Անպարագրելի Յոգին ներառում է ողջ տիեզերքն իր անսահմանությամբ, և որն այդ պահին իրոք նրանց կողքին էր: Արդ ուր էլ որ տարածենք մեր թևերը, Աստծո սքանչելիքի մեջ ենք և **«Թիթեռնիկի աչքն ու թևը բավական են մի անաստված խորտակելու համար»** (Դիդրո)

ԸՆՏԱՆԻՔՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՄՆ ՄԱՆՐԱՏԻԶԵՐՔ Է

«Ամուսնությունն ըստ ամենայնի հարգելի է (Եբր.13.4):

Հիսուս Քրիստոս իր տված վարդապետությունը տիեզերական համարեց, քանի որ այն անսահման է տիեզերքի պես: Չնայած այն տրվեց մեզ, որ անձայրածիրի լոկ մի մասնիկն ենք, բայց Տիրոջ համար այնքան թանկ, որ այդուհանդերձ վարդապետությունը տիեզերական բնույթ ունի: Սա գալիս է ապացուցելու, որ ըստ էության մի փոքրիկ տիեզերք ենք նաև մենք: Հիսուս աստվածայինը մարդկային գիտակցությանը հասանելի դարձնելու համար երկրային երևույթներ էր վկայակոչում: Հայտնի են «Երկնքի արքայության» համեմատությունը մանանեխի հատիկի հետ, «Հարսանեկան խրախճանքի առակը», «Ճրագի» և բազմաթիվ այլ առակներ, որոնցով հազեցած էր Նրա խոսքը:

Այսօրվա գիտականությամբ հագեցած միտք ունեցողներիս հեշտ ու սահուն ընկալելի լինելու համար մի կարևոր հարց, որ գրեթե աղետալի վիճակում է, փորձենք պարզաբանել՝ նրան տիեզերականություն հաղորդելու միջոցով:

Մեզ բոլորիս քաջ հայտնի է, որ մարդկության կորիզն ընտանիքն է: Թե՛ հոգևորականին՝ մարդկության հոգևոր բարձր ցուցանիշ ապահովելու համար, թե՛ գիտնականին՝ զարգացող գիտությանը նվիրյալին, առողջ մտածողության տեր սերունդ ունենալու համար, թե՛ արվեստագետին՝ արվեստի ազնվացման համար, թե՛ աշխատավորին՝ իր անդուլ աշխատանքում երջանկություն տեսնելու համար, ամենից շատ պետք է հետաքրքրեն ընտանիքի բարոյական, ազնիվ ու աստվածային վիճակի հասցնելու ճանապարհները, որոնք այսօր լցվել են բազմաթիվ խոչընդոտներով և գրեթե անանցանելի են թվում: Սակայն այդ ճանապարհով գնացողին տրվող օգնության վրա չպետք է կասկածել: Պետք է քայլել համարձակ՝ մաքրելով ու ամրացնելով ճանապարհը, որովհետև նույնիսկ հորձանուտի միջով կարելի է անցնել անվնաս՝ որպես փարոս ունենալով Մեծ Լուսյի ծիածանը և պետք է իմանալ, որ ծիածանը փոթորկից հետո է լինում: Պետք է ձգտել Սիրով ու հավատքով, առանց սարսափի, որովհետև Սերն է ճշմարիտ ճանապարհը, և այդ ճանապարհով քայլողին վսեմի ձգտումն այնքան զորություն է տալիս, որ նույնիսկ արտահայտվում է ֆիզիկական մարմնում՝ իմունիտետի ձևով, իսկ մանանեխի հատիկի չափ հավատք ունեցողը կարող է լեռներ տեղաշարժել, ի բարօրություն աստվածային գործի, սակայն չպետք է մոռանալ անվեհերության մասին, որովհետև սարսափը խոչընդոտում է սրընթաց հասնող օգնությանը:

Մարդկային ոչ մի խառնաշփոթություն չի կարող խցանել ինքնամոռաց **ՍԻՐՈՎ** զոհաբերվողի հիանալի ճանապարհը:

Վերը նշվեց նաև չկասկածելու մասին, այո՛, կարևոր հանգամանք է, որովհետև ինչպես տգրուկը, ծծելով կենդանու արյունը, ուժասպառ է անում նրան, այնպես էլ կասկածը խժռում է հոգեկան ուժը: Այս ահավոր իրարանցումների օրերին էլ հարկավոր է կարողանալ առանց կասկածելու հաղորդակցվել Տիրոջը՝ իմանալով, որ Նա ակնթաթ անգամ բաց չի թողնի օգնության համար:

Վերադառնանք ընտանիքի թեմային: Ընտանիքը տիեզերքում գոյություն ունեցող բազմաթիվ համակարգերի նման (որոնցից ամենաքաջածանոթը մեզ համար արեգակնայինն է) մի համակարգ է, մի միկրոտիեզերք աստվածային իր բոլոր հատկանիշներով:

Արեգակնային համակարգությունում բոլոր մոլորակները (որոնցից մեկը մեր Երկիր մոլորակն է, որն էլ մի տեսակ մեր մարմնի մայրն է, քանի որ նրա նյութից Աստված ստեղծեց մարդու ֆիզիկականը), ինչպես նաև արևը, կատարում են իրենց առաքելությունը՝ ամենքն իր տեղում, մեծ բարեխղճությամբ ու բացարձակ ճշտությամբ իրականացնելով իրենց բազմաբնույթ շարժումը: Աստծո կողմից ստեղծված համակարգի այս ներդաշնակությունն է, որ, օրինակի համար, Երկրի վրա կյանքի պայմաններ է ստեղծում:

Այո՛, մեր շրջապատը լի է այսպիսի ներդաշնակությամբ գործող համակարգերով, գուցե պետք է ամաչել մրջյուններից ու մեղուներից, որոնք իրենց կենդանական մակարդակի վրա գտնվելով ու աստվածայինի նմանողությունն իրենց մեջ չկրելով, իրենց ներդաշնակությամբ ներքև են թողնում շատ ընտանիքներ:

Ուրեմն ընտանիքն աստվածային մի համակարգ է, որի անդամները, սկսած ամենակրտսեր երեխայից, վերջացրած զառամյալ պապիկով, դասավորված են աստիճանական ստորակարգումով, որի ամեն աստիճանի վրա գտնվողն ունի իր անելիքներն ու բարոյական պարտականությունները: Ընտանիքի բոլոր անդամներն իրար կապված են միևնույն շղթայի տարբեր օղակների նման, և սրանցից յուրաքանչյուրի ամրությունն ու թուլությունը ողջ շղթայինն է:

Այս շղթայի ամրությունը չափազանց կարևոր է ոչ միայն Եկեղեցու, այլև ողջ պետության անասանության համար, քանի որ բարոյական ու ազնիվ ընտանիքն է թե՛ Եկեղեցու, և թե՛ պետության խարիսխը կյանքի հողմահույձ ծովում:

Մենք բոլորս քաջ գիտակցում ենք, թե ինչ կպատահի, երբ Երկիրը «որոշի» արևի կամ իր սեփական առանցքի շուրջը պտտվելուց դադարել: Սա սովորական պարտականության անտեսում է, որն անելու ընդունակ է ցանկացած մարդ, բայց հետևանքներն աղետալի կլինեն, աղետալի, որովհետև սովորական թվացող այդ պարտականությունը նախասահմանված է Ամենակալի կողմից: Նախասահմանված, բայց ազատ կամքով իրականացող, և այդ պարտականության բարեխիղճ կատարումը, որոշ մենակյացների վկայությամբ, զարգացման առավել արդյունավոր մի ձև է, քան իրենց ընտրած ճգնողությունը, որի ժամանակ սխալվելու հնարավորությունն ու մութ ուժերի հարձակումներին չդիմանալու հետևանքով առաջացող կործանարար վիատությունն ավելի հավանական է: Այս է պատճառը, որ աստվածային ընտանիք կազմելու ցանկություն

ունեցող անհատները, չնայած ակնկալվող մեծ դժվարություններին, հանձն են առնում այդ պատասխանատու գործը և փափագում իրենց ընտանիքում ունենալ այնպիսի էակների, որոնց մասին Հիսուս ասում է. «Ով որ այս մանկանն ընդունի Իմ անունով, Ինձ է ընդունում, իսկ ով որ Ինձ ընդունի, ընդունում է Ինձ ուղարկողին, որովհետև ով որ ձեր մեջ փոքրագույնն է, նա է մեծ» (Ղուկ. 9:48):

Իսկ Իրեն ուրացողների մասին ասաց, որ Ինքն էլ նրանց կուրանա երկնքում՝ Հոր առաջ. «Եվ ով Ինձ կուրանա մարդկանց առաջ, Ես էլ նրան կուրանամ Իմ Հոր առաջ, որ երկնքում է» (Մատթ. 10-33):

«Թույլ տվեք այդ մանուկներին, որ Ինձ մոտ գան, և մի՛ արգելեք նրանց, որովհետև այդպիսիներինն է Աստծո Արքայությունը» (Ղուկ. 18: 16):

ԱՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

«Ամուսնական առագաստը սուրբ է» (Եբր. 13.4):

Իսկ թե՛ զավակ ունենալ ցանկացողներն ինչպես են ընդունում Աստծո ընծա մանուկներին, կախված է մարդկության բարոյական նկարագրից, այսինքն ընտանիքի ներդաշնակ վիճակից:

Ամուսնական առագաստը սուրբ է և սուրբ ամուսնությունը հաստատվել է դրախտում, որտեղ պղծությունն ու անմաքրություն չկա: Սուրբ և ազնիվ ամուսնական կյանքը հասարակության ներդաշնակ գոյության գլխավոր նախապայմանն է: Սակայն միևնույն ամուսնությունը առանձին դեպքերում կարող է վտանգ դառնալ, հոգին սպանող մեղքերի տեղիք տալով: Սա պատահում է այն դեպքերում, երբ ամուսնության բուն նպատակը քողարկված կամ այլասերված է, և օրինական կերպից որքան շեղված, այնքան ավելի նողկալի է: Երեխաներ ունենալն ամուսնության առաջին և հիմնական նպատակն է: «**Չէ՞ որ Տերը ձեզ մեկ մարմին և հոգի արեց նրա հետ: Եվ ասացե՛ք թե ուրիշ ի՞նչ է խնդրում Աստված, եթե ոչ՝ զավակ**» (Մաղ. 2:15): Այնտեղ, որտեղ դա նենգափոխված է, ամուսնությունն Աստծո առջև ահավոր ու զարշելի է դառնում:

Սոստ հարյուր տարի առաջ իտալացի իրավաբան Ռ. Բալեստրինին այսպիսի մի արտահայտություն էր արել, որը հետագայում մարգարեական դարձավ. «Որևէ ժողովրդի բարոյական անկման հասած լինելու ապացույց կարող են լինել այն ժամանակները, երբ հղիության ընդհատումը բացարձակ ընդունելի ու սովորական բան կհամարվի» (Çaiđiđâú 1992, 1):

Խորհենք, այն այժմ սովորական երևույթ չի դարձել մարդկության համար, երբ փոքրիկ Հայաստանի ապագա սերնդի ավելի քան 60%-ը, ինչ-ինչ անհեթեթ պատճառներով վիրաբուժական գործիքի անմեղ զոհն է դառնում՝ «սիրելի» ծնողների դաժան համաձայնությամբ: Ակնհայտ է, որ այս երևույթը հազվադեպ է այն ընտանիքներում, որտեղ ամուսնական կյանքի նպատակն Աստծո ծառայությունն է, որի դեպքում մարդկային կեսերի մտերմիկ հարաբերությունը, ըստ էության, աստվածային միաձուլում է: Իսկ սա արարչագործության մի դրսևորում է որդեծնության մեծ խորհրդի իրականացումով: Նման հազվագյուտ ընտանիքներում, կյանքի մնացած ասպարեզներում, ստեղծագործելու կարողությամբ կինը համընթաց է քայլում իր կեսի հետ և երբեք միայն ծննդաբերող ապարատի չի վերածվում: Այստեղ իրենց զավակին Սրտի՝ Սիրո վեհ թրթիռով են սպասում ու աղոթքով ընդունում, ոչ թե այդ զավակը, վավաշոտ կրքերի հետևանք լինելով՝ «կույր» նշտարի քմահաճույքին է հանձնվում:

Բացի այն, որ կատարվում է ընտանեկան միջավայրում տեղի ունեցող սպանությամբ, կարելի՞ է արդյոք պատկերացնել, թե ինչ է տեղի ունենում այն հոգու հետ, որ աստվածայինի մի մասնիկն է, որը մարդկային միջավայրում իրեն համար նախադրյալներ տեսնելով հանկարծ կորցնում է այն, երբ գուցե արդեն սիրում էր իր ապագա ծնողներին:

Ի՞նչ անել, ինչպե՞ս բարոյական պատմե՛տ տեղծել, երիտասարդությանն ինչպե՞ս ստիպել, որ թեկուզ մի պահ լրջորեն մտածեն այն մասին, որ այնտեղ գոյություն ունեցողը մարդ է: Արդի միջուկային բժշկությունն իր զարգացման մեջ թռիչքներ ապրելով, ամենաժամանակակից տեխնիկայի օգնությամբ ապացուցում է, որ սաղմը բեղմնավորման պահից արդեն մարդկային անձնավորություն է՝ անկրկնելի անհատականություն: Նա ցավ է զգում, ցավից ճչում է, և որ նրա հետ մենք սպանում ենք մեր ապագան: Սրանով մենք աններելի մեղքի կնիքն ենք դրոշմում մեր ճակատին:

Ինչպե՞ս անել, որ այդ ճիչը լսելի լինի...

Այսօրվա ընտանիքն իր զարգացման ուղու վրա բազմաթիվ այսպիսի խոչընդոտներ ունի, և երջանիկ լինելու համար նրան հարկավոր են ճշմարիտ բազմաթիվ գիտելիքների իրագործում, որոնք արդեն անտեսվում, մոռացության են մատնվում կամ ճարակորեն հարմարեցվում են մարդկային եսամուլական ցանկասիրություններին:

Իհարկե, խոչընդոտները տարբեր բնույթի են, և հաղթահարման միջոցներն էլ՝ բազմազան, բայց, անշուշտ, առաջին հերթին ուշադրությունը պետք է սևեռել այն բանի վրա, որի մասին խոսելիս Հիսուս ասում է. «**Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց ու ուտիճ ոչնչացնում են, և ուր գողերը ծակ են բաց անում և գողանում, այլ գանձեր դիզեցե՛ք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեց, և**

ո՛չ ուտիճ չեն ոչնչացնում, և ո՛չ էլ գողերը ծակ են բաց անում և գողանում. քանի որ, ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Մատթ. 6: 19-21):

Իսկ որոնք են այդ ճշմարիտ գանձերը, որ կարող են երջանիկ դարձնել մեր ընտանիքները, անգամ նյութապես անբավարար պայմաններում, ի դեպ շատ հաճախ նման վիճակը նպաստում է հոգևոր զարգացմանը և գորացմանը, ինչը և Պողոս առաքյալը հաստատում է իր խոսքում. **«Երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր» (Բ Կորնթ. 12: 10):**

Ընտանիքը երջանիկ է լինում, երբ բոլոր անդամները երջանիկ են միմյանցով և գտնվում են ներդաշնակ զարգացման՝ հոգևոր կատարելագործման ուղու վրա: Ծիշտ է, բոլորը չունեն կյանքի հորձանուտներում քայլելու նույն կարողությունը, բայց կարևորն Աստծո և մերձավորի նկատմամբ ունեցած սիրուց ծնված ցանկությունն ու ձգտումն է, որոնք կամքի լարման օժանդակությամբ, ունեցած կարողությունների ու հոգու արժեքների բազմացման պայմաններ են ստեղծում: Մտաբերենք Հիսուսի պատմած «Քանքարների առակը», որում գովասանքի է արժանանում այն մշակը, որը տիրոջից իրեն վստահված դրամը ջանք թափելով բազմացրել էր, այլ ոչ թե վատնել կամ ինչ որ տեղ թաքցրել նույնությամբ ետ վերադարձնելու ակնկալությամբ: Իսկ վերջում Հիսուս ասում է. **«Ով ունի նրան պիտի տրվի և ունեցածը պիտի ավելացվի, իսկ ով չունի, նրանից ունեցածն էլ պիտի վերցվի» (Մատթ. 25: 29):**

Ոչ ոք չի կարող ամբողջությամբ ընկալել, թե ինչ հանձնարարություն է իրեն վստահված Բարձրյալի կողմից: Բայց յուրաքանչյուրիս տրվում է մի հատիկ, որպեսզի նրա շուրջը ձևավորենք մեր երկրային փորձառությունը, թեև շատ հաճախ չենք էլ մտածում այդ անաղարտ մասնիկների մասին, քանի որ չենք ցանկանում պատկերացումն ունենալ այն աղբյուրի, ինչը վեր է կոշտ նյութի աշխարհից, և որտեղից բխում են բարու հրաշք ալիքները:

Այո՛, ընտանիքի անդամներից ոմանք կարող են թերանալ հոգու զարգացման ճանապարհին, բայց երբ այդ ընտանիքում կա հավատ, ձգտում ու սեր Աստծո ու մերձավորի նկատմամբ, ետ մնացողը կգա ու կհասնի իր մերձավորներին այն մանկան պես, որ ծնողների հետ զբոսանքի դուրս գալով, չի կարողանում իր քայլերը հարմարեցնել նրանց հետ, իսկ երբեմն էլ ճանապարհին ծաղիկ կամ թիթեռ տեսնելով հրապուրվում ու հետ է մնում, բայց ի վերջո հետ մնալն զգալով, վազում ու հասնում է նրանց, և մանուկն այսպես է մեծանում ու դառնում իր ծնողների ուրախությունն ու ապավենը: Բայց սա չի նշանակում, որ ետ մնացող մանկանը պետք է վերցնել ուսերի վրա՝ վախենալով նրա կորսվելուց, սակայն աչքաթող անելն էլ անհեթեթություն կլինի, որը երբեք թույլ չի տա սիրող մոր ու հոգատար հոր սիրտը: Չպետք է բռնադատել ազատ կամքը, բայց անտարբերությունն էլ միանգամայն տրամաբանական չէ, այլ պետք է ընդլայնել գիտակցությունը: Մեր Տերն Ինքը ոչ ոքի չբռնադատեց Իրեն հետևելու, այլ ընդառաջ գնաց նրանց, ովքեր հավատացին Իրեն, լսելով ամենքին ուղղված ճշմարիտ խոսքը, սակայն Նա մշտաբարն զգնությամբ հսկում ու դաստիարակում է իր որդիներին բոլոր ժամանակներում:

Իսկ ինչպե՞ս հիմք դնել ներդաշնակ ընտանիքի: Ընտանիքի ցավոտ կետերից են՝ ամուսինների դժգոհությունը միմյանցից, որը մնացած բոլոր ցավերի ու տառապանքների ծնունդ տվողն է, ծնողների դժգոհությունը երեխաներից, որն առաջ է գալիս, երբ ծնողները, քաղաքակիրթ լինելով, ունենում են «ոսկե» երիտասարդությանը, իսկ երբեմն էլ, Աստծուն նվիրված երեխաներ և երեխաների դժգոհությունը ծնողներից, երբ երեխաները կյանքը տեսնում են պատրանքով շղարշված աչքերով, իսկ ծնողների, ամենաքիչը կյանքի փորձով ձեռք բերված խոհեմությունը համարում ուղղակի անմտություն, հետամնացություն կամ մտացածին ինչ-որ գաղափարախոսություն, որը ժամանակակից կյանքում գործադրելն անհեթեթություն է, ըստ նրանց: Իհարկե, բազում են նման անհարթությունները, բայց բոլորը թվելն ուղղակի անպատեհ է, որովհետև ի վերջո այս բոլորը հետևանքներ են սխալ կենսաձևի, որի մեջ մտնում են զուտ անձնական, ամենաչնչին թվացող, բայց իրականում առավել կարևոր երևույթներից մինչև ամենաընդհանրական հարցերը:

Քանի որ ընտանիքի ակներև ձևավորումն սկսվում է ամուսնությունից և սրա ճիշտ կամ սխալ լինելուց է գալիս երջանկություն կամ դժբախտություն, հետևաբար սկսենք սրանից: Ամեն ինչ պետք է կառուցել Սիրո վրա (այո՛, մեծատառով), որովհետև այն աստվածային է և առաջ է գալիս երկու ճշմարիտ կետերի միացմամբ՝ Աստծո տիեզերական գործին մի կաթիլ օգնություն հասցնելու վսեմ ձգտումից: Գուցե այս մտքերն անիրագործելի թվան, բայց այս Սերը նյութական ոչինչ չի ճանաչում, և լուսավոր ապագա խոստացող այսպիսի սիրով միավորված զույգերը, ոչ թե իրար են նայում, այլ միևնույն ուղղությամբ: Սա նման չէ այն սիրուն, որ կառուցվում է արտաքին, ժամանակավոր վայելքների վրա, օժանելիքի տարբեր բուրմունքների վրա, ապագայում ակնկալելի հարստության վրա, որի ժառանգորդն է փեսան, աղջկա արտաքին, խաբուսիկ տվյալների վրա, որոնք գոյատևում են մինչև առաջին հղիության շրջան: Եվ

Հիասթափվում է նաև ապագա մայրիկը, տեսնելով ամուսնու հիասթափությունից առաջացած անտարբերությունն ու անհավատարմությունը: Եվ հետևաբար ոչ շատերն են կարողանում «դիմակայել» նման հիասթափության և «պահպանել» այսօրվա շատ ընտանիքների նման ընտանիք, որտեղ զրեթե ոչ ոք երջանիկ չէ: Այո՛, հենց այսպիսի ընտանիքներում է, որ առաջ է գալիս հղիության արհեստական ընդհատման հարցը: Իսկ ի՞նչ է ասում այս մասին ժամանակակից բժշկությունը. մի քանի տարի առաջ ամերիկացի մանկաբարձ գինեկոլոգ Բերնարդ Նաթանսոնը մի եզակի ֆիլմ՝ նկարեց: Երկար տարիներ նա հղիությունների ընդհատման կլինիկայի ղեկավարն էր և մի քանի տասնյակ հազար այդպիսի վիրահատություններ էր կատարել: Բայց ինչպե՞ս եղավ, որ փորձված մասնագետը հանկարծ իր գործի մասին սկսեց խորհել՝ այն դիտելով

բարոյագիտության տեսակետից: Ինչո՞ւ վիրաբույժի վաղուց սովորական դարձած աշխատանքն ու բարոյափիլիսոփայական ըմբռնունը հատվեցին, ինչպես զուգահեռները ոչ էվկլիդյան երկրաչափությունում: **«Եթե որևէ մեկը կարողանար լսել այն... բայց ժապավենը, որի վրա «ներսից» պատկերված է պտղի վարքը հղիության ընդհատման նպատակով արվող վիրահատական միջամտության պահին, համր է: Միայն երևում է, թե ինչպես մահից առաջ, նախազգալով իր վախճանը, կարծես վայնասուն բարձրացնելու համար տասներկու շաբաթական սաղմը լայն բացում է բերանը...»** (Շաժձիսնա՞ 1992, 1):

Անտիկ աշխարհի դաժան օրենքները թույլ էին տալիս անպատիժ կերպով սպանել երեխային: Ժամանակակից աշխարհի «մարդասիրական» ու «ժողովրդավարական» օրենքներն, ըստ էության, արդարացնում են այդ քայլը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ինչպես նաև Ընդհանրական Սուրբ Եկեղեցու մաս եղող մյուս եկեղեցիները միաբան կերպով մարդկության այս արարքը՝ չժնված երեխայի սպանությունը համարում են աշխարհում երբևէ թույլ տրված ոճիրներից ամենաողբերգականը:

Մենք մեր թշնամուն ամբաստանում ենք պատերազմում ընկած ամեն մի զինվորի համար, բայց ամոթալի կերպով ցեղասպանությամբ զբաղվում «խաղաղության» անարգել վիճակը չարագործելով: Ռուս մեծ մտածող Ֆ. Մ. Դոստոևսկին ասել է. **«Երբ երկրի վրա մի մարդ են խաչում, նշանակում է ողջ մարդկությանն են խաչում»**, հետևաբար մարդու պաշտպանությունը հասարակության սրբազան պարտականությունն է: Մենք չպիտի թույլ տանք, որ անհատները ողջ մարդկությանը խաչը բարձրացնեն չժնված, անմեղ երեխաների քմահաճ սպանության ոճրագործությամբ:

Կանայք վաղուց ծանձրացել են արքրտի վնասներին վերաբերող թեմայից: Միայն ափսոս, որ այդ գրույցներում հազվադեպ է արտահայտվում հարցի բարոյական տեսակետը: Այնինչ բոլոր նորմալ մարդկանց համար կենդանի կյանք ոչնչացնելն անբարոյականություն է, մեղք է: Եվ եթե այդ զգացումը բացակայում է, նշանակում է մարդու հոգին սնանկացել է, նրանում մի շատ կարևոր բան բացակայում է:

Վերադառնանք Բերնարդ Նաթանսոնի ֆիլմին: Այն սարսափելի է: **«Շատ բժիշկներ ֆիլմը դիտելուց հետո կտրականապես հրաժարվեցին հղիության արհեստական ընդհատման վիրահատություն կատարելուց: Ժապավենը պատկերում է, թե ինչպես, զգալով մահվան վտանգը և կարծես ջանալով խույս տալ վիրաբուժական գործիքից, պտուղը տազնապի մեջ այս ու այն կողմ է նետվում, թե ինչպես են հաճախանում նրա սրտի զարկերը, թոպեում հասնելով 140-200»** (Շաժձիսնա՞ 1992, 1):

Այս ֆիլմը դարձավ գիտնականների առաջին փորձերից մեկը՝ միայն գիտությանը և բարոյականությանը հավասարապես վերաբերող այս հարցի էությունն ըմբռնելու համար:

Ժամանակակից գիտությունն արդեն շատ բան գիտի սաղմի կյանքի մասին:

«Բժիշկների մեծ մասը գալիս է այն եզրակացության, որ անհնար է ապացուցել կախարդական այն թոպեի առկայությունը, որից հետո սաղմը դառնում է երեխա, մարդ: Դատեցեք ինքներդ. տասնութերորդ օրվանից արդեն սկսվում է զգացվել սաղմի սրտի աշխատանքը և գործում է արյան շրջանառության սեփական համակարգը: Հիսուն օրականում ի հայտ են գալիս ուղեղի գրգիռները, իսկ դա գիտության համար մարդու կենդանի կամ անկենդան լինելը հաստատող հիմնական ցուցանիշն է: Այդ ժամանակ սաղմն ունի միանգամայն ձևավորված աչքեր, շրթունքներ, լեզու»:

Նյու-Յորքի բժիշկ Պաուլ Ռոկվելն այսպես է նկարագրում ութ շաբաթական սաղմի արքրտը. **«Սաղմը երկու ամսական է: Ես ձեռքս վերցրի ընկերքը և տեսա, թե ինչպես պտղապարկի հեղուկում մանրադիտակային չափերի՝ մեկ ամբողջ հինգ տասնորդական դյույմ երկարություն ունեցող, արական սեռին պատկանող սաղմը բավական արագ լողում է: Նա լրիվ ձևավորված էր, ուներ կոնաձև մատներ: Նրա մաշկը համարյա թափանցիկ էր, իսկ մատների ծայրերին հեշտությամբ կարելի էր տարբերել բարակ զարկերակներն ու երակները:**

Երբ ընկերքը պատռվեց, այդ մարդը կյանքից զրկվեց և մեզ ծանոթ՝ չտարածվող վերջույթներով սաղմի ձևն ընդունեց»:

Ամերիկացի բժիշկ Էրիտ Խանտը գրում է. **«Բեղմնավորված ձվաբջիջը հենց այնպես առանց սեփական բնութագրի, քջջային զանգված չէ: Այդ փուլում նա նման չէ ոչ ծաղկի կոկոնի և առավել ևս, կենդանական ցեղի ինչ-որ սաղմի: Այն ամբողջությամբ և բացարձակապես մարդկային էակ է: Նրա կյանքն այնպիսին է, ինչպիսին նորածնինն է, երեխայինը, պատանունը և հասուն մարդունը»** (Շաժձիսնա՞ 1992, 1):

Իրավիճակը հակասական է. նրանք, ովքեր երբևէ պաշտպանում էին կնոջ արքրտ անելու իրավունքը, այժմ դրա դեմ են պայքարում: Ավելին. այդ պայքարում, առաջընթաց ապրող գիտությունը միացել է Եկեղեցուն և այդ միասնական պայքարին պարտավոր է իր լուծման ներդնել նաև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, որ դեռևս 8-րդ դարում Սուրբ Հովհան Օձնեցի հայրապետի ձեռքով հավաքված իր կանոնագրքում առանձին մի տեղ է հատկացրել Բարսեղ կեսարացի մեծ հայրապետի հեղինակած այն կանոնին, ըստ

որի, դատապարտելի են հղիությունը որևէ կերպ կանխող կամ չար միջոցներով դրան խոչընդոտող բոլոր մարդիկ. « Իսկ ովքեր որ չար դեղերով մանուկներին սպանում են որովայնում, և արգանդը դեղերով կապում հաճախակի պոռնկանալու համար և սողամարդուն ու կնոջը խողխղում են և միմյանց ատելի դարձնում պսակի ընթացքում, արժանի են, որ քահանան այդպիսիներին կարգի ու ապաշխարության բերի. յոթ տարի ունկնդիրների հետ թող մնա, երեք տարի ձեռքի տակ, արտասուքով և տնանկների նվիրատվությամբ թող օրենքներին արժանի լինի: Եվ եթե նույն մոլորության մեջ մեռնեն, ահա չար կլինի մեղավորի մահը, թող զրկվեն սուրբ օրենքներից և քրիստոնյաների շարքում չթաղվեն» (Կանոնագիրք հայոց Բ, Կանոն Բարսեղի Կեսարացույ, կանոն 6 2 Ը), որովհետև հասարակությունը կազմված է ընտանիքներից և միշտ կլինի այնպիսին, ինչպիսին այն դարձնեն ընտանիքի ղեկավարները:

«Ամենայն զգուշությամբ պահիր ու պահպանիր քո Սիրտը, որովհետև Սրտից են բխում կյանքի աղբյուրները» (Առակաց 4. 23): Սիրտն օրգանիզմի արևն է, որ կյանք է տալիս մարմնին և իր մեջ աստվածային մասնիկի՝ Սիրտ պարունակումով փրկության տանում մարդկային հոգին, իսկ հասարակության ու Եկեղեցու սիրտն էլ ընտանիքն է: Հասարակության բարօրությունը Եկեղեցու հաջողությունն է, և ժողովրդի ծաղկումը կախված է ընտանիքի բարոյական առողջությունից:

Մարդկությանը վստահված ոչ մի այլ աշխատանք ավելի կարևոր չէ, քան հայրերի ու մայրերի աշխատանքը: Թե ինչ բարոյական մակարդակի վրա է գտնվում այն ընտանիքը՝ Եկեղեցու սիրտը, որի ներսում, առանց խղճի խայթ զգալու, թույլ է տրվում «մանկասպանություն», ամեն ոք պետք է դատի ինքը:

Իսկ թե ինչպիսին են այն երեխաները, որոնք «երջանիկ» բացառությամբ ազատվում են բժշկական նշտարից և լույս աշխարհ գալիս ծնողների փառասիրական նպատակների հետևանքով, կարելի է հարցնել մայրերին, այն պահին, երբ նրանք զավակի անհաշիվ չարություններից դրդված դուրս են գալիս մայրական անհուն սիրտ համբերության ավերից և սկսում անիծել իրենց սեփական որդուն կամ դստերը: Բայց այս պահին հարկավոր է հարցնել, թե ի՞նչ հանգամանքներում է նա կյանք տվել իր զավակին: Արդյո՞ք նրա նպատակը որդեծնությունն է եղել, հանուն համամարդկային բարօրության, արդյո՞ք ինքն արել է ամեն ինչ, իր առողջությունը (լինի հոգևոր թե մարմնական) պահպանելու միջոցով, զավակին առողջ մարմին ու միտք պարգևելու համար, արդյո՞ք իր որդեծնությունը, և նույնիսկ կարելի է ասել ամուսնությունը, լոկ ցանկասիրական կրքերը բավարարելու ձգտման արդյունք չի եղել:

Այսպես, երբ անդրադառնում ենք քրիստոնեական սրբերի վարքագրությանը, նկատում ենք, որ գրեթե բոլոր մեծերը ծնվել են սրբակենցաղ պայմաններում: Ուրեմն պայմաններ ստեղծենք լուսավորյալ զավակներ ունենալու համար: Մի կարծեք, թե սրա համար հարկավոր է անպայման գնալ ճգնության՝ ապրելով անապատում. դա պարտադիր պայման չէ: Ավելի գնահատելի է այն, որ մարդ, ապրելով մարդկային միջավայրում, աշխատում է մաքրել ինքն իրեն նախանձից ու ատելությունից, ազահությունից ու անխղճությունից, անմաքրաբարոյությունից ու այն զաղտնի տգեղ մտքերից, որոնք ամեն օր, գրեթե ամեն ժամ առաքվում են բաց տարածություններ, որտեղ նրանք չեն անհետանում, եթե չի ստեղծվում դրանք արմատախիլ անող Սիրտ վսեմ ուժը: Այս ախտերի հետևանքն է, որ մի օր հարյուրապատկվելով կախվում է մեր կամ մեր հարազատների գլխին, տարբեր որակի աղետների ձևով:

Զնայած ճշմարիտ ուղու վրա գտնվողն ինքն իր մաքրվելու արդյունքները քիչ է զգում. սրա վառ օրինակը Սուրբ Գ. Նարեկացու հետևյալ խոսքերն են. **«Ապերախտ՝ բազմերախտիդ առջև, ապաշնորհ՝ բազմաշնորհիդ առջև, բարերարիդ քաղցրության դառնացուցիչն են ես: Վայ անհատուցանելի բյուրավոր քանքարների պարտապանիս: Ինչպե՞ս պիտի ելնես մեղքի բանտից. որովհետև պարտքերդ շատ են, ու վճարումներդ՝ անթիվ, կշտամբանքը սաստիկ է, ու նախատինքն՝ անվերջ. բայց թե՛ ուժգին զղջումը, և թե՛ մոլեգին մեղանջումը հավասարապես կորստաբեր են. առաջինը թերահավատությամբ՝ Հզորի ձեռքն ապիկար է համարում, իսկ երկրորդը չորքոտանի պաճարների նման կտրում է հույսի առասանը»:** Բայց ինչպես Նարեկացին մի վառ փարոս է մարդկության՝ լույսի ձգտողների համար, այնպես էլ ճշմարտության ամեն ճամփորդ մի տեսակ փոքրիկ լապտեր է դառնում՝ միանալով համատարած խավարը փարատող հավիտենական լույսին՝ և շատ լավ տեսանելի է լինում խավարում խարխափողներին, երբեմն նրանցից ոմանց կողմից էլ հարձակումների ենթարկվելով, քանզի խավարամուկների աչքերը շլանում են անգամ լույսի նշույլից: Սակայն ինչպես վառ փարոսն ալեկոծված ծովում մոլորված նավերին հույս է ներշնչում ու դեպի իրեն կանչում, այնպես էլ խավարում վառված փոքրիկ լապտերն անգամ դեպի իրեն է կանչում ու հույս է ներշնչում աչալուրջներին ու լույսի ձգտողներին:

Աշխատենք լինել եթե ոչ խավարը փարատող ջահ, գոնե իր լույսն աստիճանաբար ուժեղացնող մի լապտեր, և մեր երեխաներն էլ կլինեն լույսի ձգտողներ, այլ ոչ թե խավարի: Իսկ որո՞նք են այդ լապտերային լույսի աստիճանաբար ուժեղացման միջոցները: Բազմաթիվ են, որովհետև դրանք մեզ տրվել են դարեր

շարունակ: Կարդանք Մատթեոսի Ավետարանից հինգերորդ գլխի, «Օրենքի ճշմարիտ ուսուցումը» վերնագրի ներքո հիշված, Հիսուսի խոսքերը.

«Լսել եք, թե ինչ ասվեց. «Մի սպանիր», իսկ ես ձեզ ասում եմ, թե՛ ամենայն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի, և ով որ եղբորն ասի հիմար, ենթակա կլինի ատյանի, և ով որ իր եղբորն ասի ապուշ, ենթակա կլինի գեհեմի կրակին:

Լսել եք, թե ինչ ասվեց. «Մի շնանար», իսկ ես ձեզ ասում եմ. ամենայն մարդ, որ կնոջը նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում: Եթե քո աջ աչքը քեզ զայթակղեցնում է, հանի՛ր այն և դեմ գցիր քեզանից, որովհետև քեզ համար լավ է, որ քո անդամներից մեկը կորչի, և քո ամբողջ մարմինը չընկնի գեհեմ: Եվ եթե քո աջ ձեռքը քեզ զայթակղեցնում է, կտրի՛ այն և դեմ գցիր քեզնից. որովհետև քեզ համար լավ է, որ քո անդամներից մեկը կորչի, և քո ամբողջ մարմինը չընկնի գեհեմ:

Արդարև ասվել է. «Ով որ արծակի իր կնոջը, թող նրան արծակման թուղթ տա»: Իսկ ես ձեզ ասում եմ. ամենայն մարդ, որ իր կնոջն արծակում է առանց պոռնկության պատճառի, մա՛ է, որ շնանալ է տալիս, և ով որ արծակվածին է առնում, շնանում է:

Լսել եք դարձյալ, թե ինչ ասվեց մախնիներից. «Սուտ մի՛ երդվիր, բայց պիտի հատուցես Տիրոջն այն, որ երդվել ես», իսկ ես ձեզ ասում եմ՝ ամենևին չերդվել, ոչ երկնքի վրա, որովհետև Աստծո աթոռն է, ո՛չ երկրի վրա, որովհետև Նրա ոտքերի պատվանդանն է, և ո՛չ Երուսաղեմի վրա, որովհետև մեծ Արքայի քաղաքն է:

Լսել եք՝ ինչ ասվեց. «Աչքի փոխարեն՝ աչք և ատամի փոխարեն՝ ատամ», իսկ ես ձեզ ասում եմ. չարին հակառակ չկանգնե՛լ. այլ եթե մեկը քո աջ ծնոտին ապտակ տա, նրան մյուսն էլ դարձրու: Եվ եթե մեկը կամենա քեզ բռնադատել և քո շապիկն առնել, նրան քո բաճկոնն էլ թող: Եվ եթե մեկը քեզ հարկադրի մի մղոն ճամապարհ անցնել, նրա հետ երկու՛ էլ գնա: Տո՛ւր նրան, ով քեզնից խնդրում է. և կամենում է քեզնից փոխ առնել, երես մի դարձրու նրանից:

Լսել եք արդարև, թե ինչ ասվեց. «Պիտի սիրես ընկերոջդ և պիտի ատես թշմամուղ»: Իսկ ես ձեզ ասում եմ. սիրեցեք ձեր թշմամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին, բարություն արեք ձեզ ատողներին և աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում, որպեսզի որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է, քանի որ Նա Իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա և անձրև է թափում արդարների և մեղավորների վրա: Եթե սիրեք նրանց, որոնք ձեզ սիրում են, ձեր վարձն ի՞նչ է, չէ՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում: Արդ, կատարյալ եղեք դուք ինչպես և ձեր Երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5: 21-22, 27-30, 31-34, 38-39, 43-46, 48):

Այո՛, կյանքի սկզբնավորումից մինչև մեր օրերը տարբեր դարերի մտածելակերպերին համապատասխան հայտնություն է եղել մարդկությանը Աստծո հայրախնամ հոգատարության շնորհով:

«Կենդանի եմ ես,-ասում է Տերը,-չեմ կամենում մեղավորի մահը այլ զղջումը»: Բայց ես ային լավ մարգարեացավ ասելով. **«Այս ժողովուրդն ինձ շուրթերով է մեծարում, մինչ իրենց սրտերը հեռացել են ինձանից: Ձուր են ինձ պաշտում, մարդկանց կողմից պատվիրված վարդապետություններ են ուսուցանում»** (Մտթ. 15. 8): Եհիշտ էր մարգարեացված, քանզի Հիսուս եկավ ու անմխիթար վիճակում գտավ ընտրյալ ժողովրդին և սրտի խոր կսկիծով ասաց. **«Վա՛յ ձեզ, որ մարգարեների շիրիմներն եք շինում, իսկ ձեր հայրերը նրանց սպանեցին: ... Դրա համար Աստծո իմաստությունն ասաց. նրանց մեջ մարգարեներ և առաքյալներ կուղարկեմ և նրանցից ոմանց պիտի սպանեն և հալածեն, որպեսզի այդ սերնդից պահանջվի արյունը բոլոր մարգարեների՝ թափված աշխարհի սկզբից՝ Աբելի արյունից մինչև արյունը Ջաքարիայի, որը կորստյան մատնվեց խորանի և տաճարի միջև. այո՛, ասում եմ ձեզ, պիտի պահանջվի՛ այդ սերնդից»:** (Ղուկ. 11.47 49 50 51): Հիսուս սրտաբեկ այս խոսքերն իրեն շրջապատող կեղծավորներին ուղղեց, որովհետև տակավին մի քանի տարիների ընթացքում **«Հովհաննեսը եկավ. ոչ ուտում էր և ոչ խմում. և ասացին՝ նրա մեջ դև կա: Եկավ մարդու Որդին. ուտում էր և խմում. և ասում էին՝ ահա ուտող և խմող մարդ, բարեկամ մաքսավորների և մեղավորների»** (Համենատ. Մտթ. 11. 18-19): Հիսուս բարկացավ, որովհետև այդ նույն ժողովուրդն էր, որ անհամբերության պատճառով կուռք պաշտեց ու պատճառ դարձավ, որ Մովսես փշրի Աստծո գրած պատվիրանների տախտակները, որովհետև այդ նույն ժողովուրդն էր, որի աչքերը բազմիցս հանդիպել էին

Սաղմոսերգուի այն խոսքին թե. **«Ո՞վ է հավիտենական կյանք ուզողը. թող նա ականջով լսի Իմ Որդու ձայնը»** (Սղմ. 33. 13), բայց նրանք լսելով լսեցին ու չիմացան:

Մենք պարտավոր ենք խորապես շնորհակալ լինել Տիրոջից, որ և անցյալում կատարվածները հայտնեց մեզ, և իրագույն դարձրեց ներկա դեպքերին, և նաև ապագայի մասին անտեսյակ չթողեց, և իրավացիորեն կործանվում է այն մարդը, որ իմացած լինելով արդարության ճանապարհը, ընթանում է խավարի ճանապարհով:

Օրենքը մարդուն տվել էր սահմանափակ գործելու միջավայր, որն ամփոփվում էր գործողությունների այսպես կամ այնպես կատարելու սահմանումների մեջ, և եկել էր մի շրջան, երբ այն ծանրացել էր մարդու վզից կախված շղթայի նման, բայց Հիսուս մարդուն ազատեց այդ շղթաներից՝ նրան տալով Տիեզերական Սիրո գաղափարը, որն ամենաճշմարիտ առաջնորդն է ու այն օրենքը, որ խեղդող սահմանափակումներ չունի:

Ավետարանից բերված վերոհիշյալ օրինակները վկայում են այն մասին, որ Հիսուս ֆիզիկական մաքրման մակարդակի վրա գտնվող մարդկությանը կոչ է անում մի աստիճան ևս բարձրանալ անծայր սանդղալի վրա, այսինքն՝ ազատվել մտքի ու հոգու անմաքրությունից՝ դրա փոխարեն լցվելով Աստծո ու մերձավորի նկատմամբ Սիրո անփոխարինելի զգացումով: Եվ **«Անհավատներին լծակից մի՛ եղեք, որովհետև ինչ կապ ունի արդարությունն անօրինության հետ, և կամ ի՞նչ ընդհանրություն կա լույսի և խավարի միջև :**

Դրա համար դու՛րս եկեք նրանց միջից և մի կողմ կանգնեցեք,- ասում է Տերը,- և մի՛ մերժեցեք պիղծ բաներին. և ես պիտի ընդունեմ ձեզ. և ես պիտի լինեմ ձեզ համար Հայր և դուք պիտի լինեք ինձ համար որդիներ ու դուստրեր»:

«Սիրելիներ՛, իսկ որովհետև այս խոստումն ունենք, մաքրենք մենք մեզ մարմնի և հոգու ամենայն պղծություննից, սրբություն գործենք Աստծո երկյուղով»: (Բ Կորնթ. 6.14, 17,18: 7.1)

Մտքի ու հոգու աղարտված վիճակի անխուսափելի հետևանքների մասին է խոսում ի ծնե կույրի բժշկման ժամանակ արված տասներկուսի հարցումը. **«Ռաբբի, մեղքն ումն է, որ կույր է ծնվել, սրանն է, թե իր հորն ու մորը»** (Հովհ. 9.1-2):

Աշակերտներն այս հարցն իրենց Ուսուցչին տվեցին՝ ելնելով իրեական կրոնի մեջ ձևավորված այն համոզումից, որ մարդու գործողությունները, խոսքերն ու մտքերը, յուրօրինակ ուժի վերածվելով, պահպանվում են տարածության մեջ լիցքային ամպի ձևով և ի վերջո վերադառնում, եթե ոչ իրենց անմիջական ստեղծողին, ապա նրա որևէ մի սերնդին: Այս է վկայում նաև ժողովրդական առածը. **«Ինչ վեր նետես, այն էլ կընկնի գլխիդ»:**

Ցավոք, բազում են այն մարդիկ, որ հետևում են **«Ինձնից հետո թեկուզ քրիեղեղ»** նշանաբանին, բայց իզուր են կարծում, թե այդպես հեշտ կարծենն, քանի որ Հիսուս ասում է. **«Եվ ով որ Ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար ավելի լավ կլինեք, եթե նրա պարանոցից կախված լինեք էշի մի երկնաքար, և ծովը նետվեք»** (Մարկ.9.41):

Մեր մայրերը

«Երբ Աստված մեծ մարդու կարիք է ունենում,
նախ մեծ մայր է ստեղծում»:
(Րաֆֆի)

Կնոջ տունն Աթենքում անբռնաբարելի սրբություն էր համարվում, իսկ դասական Հռոմում այն ծաղիկներով էին զարդարում: Մի անգամ, երբ Նապոլեոնին հարցրել են, թե որն է Ֆրանսիայի մեծագույն կարիքը, նա առանց վարանելու պատասխանել է. **«Մայրեր, մայրեր և դարձյալ մայրեր»:** Հայ ընտանիքում մոր ունեցած դերի մասին հետևյալ կերպ է արտահայտվում Խրիմյան Հայրիկը. **«Տունն ու հայրենիքը մի փոքրիկ թագավորության երկիր ու սահման են, որի նահապետական աթոռին նստում են ծնողները , հայրը՝ իբրև թագավոր, մայրը՝ իբրև թագուհի, և կառավարում են հպատակ ընտանիքը: Սույն ընտանեկան պալատում ու թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ գավազան, այլ այս ամենի տեղ հայրական սերն ու մայրական գորովն է դաստիարակ ու խրատ՝ ծնողների կենդանի օրինակը»:**

Արդ, եթե դասական հունաստանի գերագույն արժանիքը գեղարվեստական հրաշալի արժեքներ ստեղծած լինելու ճշմարտությունն է, եթե Հռոմի փառքը և հավիտենական արժանիքը իր հրաշակերտած օրենսդրությունն է, և եթե իրեան կարող է առաջին ազգը

համարվել իբրև միաստվածության գաղափարն ընդունող, ապա Հայաստանն էլ աշխարհին կարող է ներկայանալ իբրև մայրությունը հարգող և մայրական սիրանքով հայտնի ժողովուրդ: Հայի այս առաքինությունը նրբորեն նկատել ու այդ մասին վկայել են անգամ օտըարները. «Հայի բարեմասնություններից մեկը, որ ես հաճախ նկատել եմ, մայրերի հանդեպ նրանց սերն է ու հարգանքը: Մի օր գեղեցիկ, կոկիկ ու խելացի մի հայ աղջիկ ինձ այցի հրավիրեց իրենց տուն: Փափկանկատ հպարտությամբ ինձ առաջնորդեց հնամենի մի տուն և ներկայացրեց պառաված, ատամներից զուրկ մի կնոջ, որ հայկական քողով ու ապարանջանով զարդարված, նստած էր կրակի մոտ: Աղջիկն իր մորն ինձ այնպես ներկայացրեց, ինչպես մի իշխանուհի կներկայացներ իր թագուհուն»:

Հազար վիշտ է սիրտդ քամել՝
Դու իսկական հայուհի ,
Այս անաստված աշխարհում էլ
Դու իմ միակ սրբուհի:(Հ.Շ.)

Հին ժամանակներում, աշխարհի որոշ ազգերի մոտ, կինն իբրև մայր, դիրքի գերակայություն չի ունեցել. Մովսիսական օրենքով նոր ծննդաբերած կինը անմաքուր էր համարվում և մեկուսացվում հասարակությունից: Արևելյան կրոնները կնոջը մեծ մասամբ թույլ չեն տալիս մասնակցել հոգևոր պաշտամունքներին: Չինացի կանայք հոգևոր վայրեր հաճախելու իրավունք չունեն: Եվ այսպես բարոյական ահավոր անկման, հիվանդությունների և որոշ ժողովրդների այլասերման հիմքում ընկած է կնոջ իր դերում չլինելու ստրկական վիճակը: Իսլամը կնոջն անհոգի արարած է համարում: Սլավոն կանայք վշտանում էին , որ իրենց առսիներն իրենց չէին ծեծում: Իսկ ստրուկ կինը միայն ստրուկներ կարող է պարգևել աշխարհին, քանի որ կնոջ հատկանիշները գենետիկորեն իր զավակներին են փոխանցվում: «Մեծ մայրերը մեծ որդիներ են ունենում», ասույթը խոր տիեզերական հիմնավորում ունի, քանի որ որդին ավելի շատ մորից է ժառանգում և ընդհակառակը՝ աղջիկները հայրական ուժերի ժառանգորդներն են: Սրա մեջ պե՛ տք է փնտրել տղամարդկային հանճարի խեղճացման ու սնանկացման պատճառը:

Մարդը կապիկ է՝ առանց հավատի,
Անհավատ կույսն էլ մայր է կավատի:(Հովհ. Շիրազ)

Կինը պետք է գիտակցի իր նշանակությունը՝ աշխարհի մոր իր մեծ առաքելությունը, և պետք է պատրաստվի մարդկության ճակատագրի համար պատասխանատվություն կրելուն:

Կյանք տվող մայրն իրավունք ունի նաև տնօրինելու իր զավակների ապագան: Մի՞թե մայրը չի կարգավորում երեխայի գիտակցված կյանքի առաջին հատիկները: Մի՞թե մայրը չի ուղղություն երանգավորում կամ երանգ տալիս զավակի բոլոր ձգտումներին ու հատկություններին: Դրա համար կինը ոտքի պիտի ելնի՝ ի պաշտպանություն ողջ մարդկության մտքի վեհացման: Մտածենք ամենաընդարձակ, ամենալուսավոր մտքերով: Մտածողության կարողության զարգացման միջոցով հիանալիորեն աճում են մարդու հնարավորությունները:

Արևմտյան կինն իր ուժերի գիտակցման արթնություն է ապրել վաղուց և ակնհայտորեն կատարել իր մշակութային ներդրումները, բայց ցավոք մեծամասնության մոտ իրավունքների հավասարակշռման ձգտումն առհասարակ ընդօրինակման մեջ է արտահայտվում:

Մի՞թե մեզ համար ցանկալի կլինեն, որ տղամարդը կորցներ իր արիության գեղեցկությունը: Նմանապես այդ վեհության զգացումից չզրկված տղամարդուն հաճելի չէ իրեն ներհատուկ սովորությունների ընդօրինակումն ու բարքերի սանձարձակության մեջ մրցակցություն տեսնելը: Նմանակումը սովորաբար առավել հեշտ ձեռքբերելից է սկսվում: Հուսանք, որ այդ վիճակն արագ հաղթահարելի է. և կինը, բնության մեծ մոր իր ճանաչողությունը խորացնելով, կգտնի ստեղծագործման արտահայտության իր անկրկնելի մեծությունը:

Կինը, որքան ձգտի տղամարդուն նմանվել, այնքան ավելի կտկարանա կառավարելու նրա հատկությունը, որովհետև կինն ավելի մեծ արժեք է՝ իբրև կին: Հետևաբար կնոջ մեջ տղամարդու հատկություն տեսնել՝ նշանակում է վնասել, տկարացնել բնությունից նրան շնորհված առանձնահատկությունները:

Անհամատեղելին համատեղելու փորձ անել՝ նշանակում է կնոջն իջեցնել իր անհատականության մակարդակից՝ նրան մայրության վեհ կոչումից զրկելով:

Ձեռակերտն է մայրս Աստծո տաճարի,

Մայրս դրսից վանք մի խեղճ,

Իր գլուխն է նուրբ գմբեթը տաճարի,

Խաչը ներսն է սրտի մեջ:

Հասարակության մեջ կինն ինչ դիրքի էլ հասնի, ինչ աստիճանի անկախություն էլ ունենա, նրա ազնվագույն պաշտոնը Մայրությունն է: Արդարև կինն ամեն բանից առաջ մայր է: Նորմալ վիճակների դեպքում նրա մեջ մայրության բնազդն ավելի ուժեղ է, քան սեռականը:

Արդ, այս բանը լավ պետք է դրոշմել մտքերի ու սրտերի մեջ, և չպետք է մոռանալ Հավիտենական Արարչին, որ կենարար իր լույսով փրկություն շնորհեց գայթակղված Եվային ու Ադամական մեղքի կնիքը կրող նրա զավակներին: Հետևաբար, մեկ անգամ ընդմիջտ կանանց բարոյապես ու հոգեբանորեն կատարյալ ներդաշնակությամբ տղամարդկանց հետ հավասարեցնողը եղավ մեր Տեր Հիսուս Քրիստոս: Աստված մարմնացավ Սբ. Կույսի միջոցով և Սբ. Մարիամի միջոցով կին արարածին բարձրացրեց հասարակության մեջ ունեցած երկրորդական դիրքից: Բայց սա չի նշանակում, թե շնորհի միջոցով ներում գտած մեղավորն այժմ կարող է հանցագործ դառնալ իր բարցրացված դիրքում: Պետք է իմանալ, որ չնայած բարձրում լինելը լավ է, բայց բարցրից գլորվելն ավելի վտանգավոր է: Արդ, տեղին է միտքն ավարտել սբ. Պողոս առաքյալի խոսքերով. «Ամեն ինչ ինձ կարելի է, բայց ոչ ամեն բան օգուտ է ամեն ինչ ինձ կարելի է, բայց ամեն ինչ չէ, որ շինում է»: (Ա Կորնթ. Ժ- 23)

«Ուզում եմ որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ, սուրբ ձեռքեր բարձրացնեն դեպի վեր, առանց բարկության և երկմտության: Նույնպես և կանայք, համեստ զարդարանքով, ակնածությամբ և պարկեշտությամբ թող զարդարվեն. ոչ թե մարգարտով ընդելուզված ոսկյա հյուսքերով կամ պճնազարդ զգեստներով, այլ բարի գործերով, ինչպես վայել է աստվածապաշտությունը հանձն առած կանանց: Կին արարածը թող ուսանի լուծությամբ, կատարյալ հնազանդությամբ: Եվ ես թույլ չեմ տալիս, որ կին արարածը խոսքով իշխի տղամարդու վրա, այլ թող լուռ մնա հավատի, սիրո ու սրբության մեջ»: (Ա Տիմոթ. Բ-8;15)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ԲՆԱԿԻՉ Է

Այսպես, դադարենք ամեն աղտեղություն վեր նետելուց, լինեն դա ամենօրյա գործերը, խոսքերը, թե մտքերը, որովհետև տիեզերքում ոչինչ անհետ չի կորչում, և ի վերջո այդ ամենը կվերադառնա, եթե ոչ մեզ, ապա մեր սերունդներին, մեր մոլորակին, որի համար այսօր մեծապես պատասխանատու ենք մենք: Յուրաքանչյուր ոք գիտի, թե ինչ վիճակում է Երկիր մոլորակը, սկսած ընդերքի արհեստականորեն ստեղծված դատարկություններից, վերջացրած օգոնային շերտի քայքայումով: Եվ այս ամենը մեր գործերի ու ցանկությունների հետևանքով: Մենք ամենքս մտահոգվում ենք մեր ընտանիքի բարեկեցիկ կյանքի համար, մեր տան հարկի տակ, բայց չէ որ երկրագունդն էլ Աստծո կողմից մարդկությանը տրված մի տուն է, որտեղ ապրում են համամարդկային ընտանիքի անդամները: Ինչպես փոքրիկ ընտանիքներում, միևնույն ծնողներից ծնված ու նույն ծնողների դաստիարակությամբ սնված եղբայրները շատ հաճախ նույն աշխարհայացքը չեն ունենում, և դա զժողովուրդների ու բաժանումների առիթ է դառնում, մեծ ցավ պատճառելով ծնողներին, այնպես էլ համամարդկային ընտանիքի եղբայրները անհաշտ են, բայց այնուամենայնիվ միևնույն ընտանիքի զավակներ են և հնարավորություն ունեն Աստծո որդիներ դառնալու: «Որքան բարի, որքան վայելուչ է, որ եղբայրները բնակվում են միասին...» (Սաղմ. 132:1) Իսկ թե այս առիթով ինչ է ասում Հիսուս

կարդանք Ավետարանի վկայությունը. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք, ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի: Արդ, ով իր անձը խոնարհեցնում է, ինչպես այս մանուկը, երկնքի արքայության մեջ նա է մեծ» (Մատթ. 15: 3-4): Պետրոս մոտեցավ Նրան և ասաց. «Տե՛ր, քանի՞ անգամ, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, պետք է ներեմ նրան. մինչև յո՞թն անգամ»: Հիսուս նրան ասաց. «Քեզ չեմ ասում, թե մինչև յոթն անգամ, այլ՝ մինչև յոթանասուն անգամ յոթը» (Մատթ. 18: 21-22): Իսկ նույն գլխի (18) տասնհինգերորդ համարի խոսքը հետևյալն է. «Եթե եղբայրդ քո դեմ մեղանչի, գնա՛ հանդիմանիր նրան, երբ դու և նա մե՞նակ եք», որպեսզի մեր ներողամտությունը եղբոր նկատմամբ անուշադրության չվերածվի: Ապա նաև «Ամառակ որդու առակը» (Ղուկ. 15: 12-32):

Մի անգամ, երբ մի մեծ մտածողի հարցրել են, թե ո՞ր երկրի բնակիչ է ինքը, պատասխանը եղել է.

«Տիեզերքն է իմ հայրենիքը»:

Ինչպես մեծ մտածողն ապրում էր հանուն տիեզերքի բարօրության (իսկ նման մարդիկ մենք շատ ենք ճանաչում, ովքեր ընդհանուրի բարօրության համար անգամ իրենց արյունը չեն խնայել, թեև շատ հաճախ չեն զնահատվել, անգամ չնկատելու են տրվել, նրանց հետևելու վախից) եկեք մենք էլ ապրենք զոհե մեր ընտանիքի ու մեր փոքրիկ Հայաստանի բարօրության համար, որովհետև ինչպես ամեն նյութ կազմված է մոլեկուլներից և ըստ դրանց է որոշվում նյութի որակն ու տեսակը, այնպես էլ հայրենիքի բարօրությունը կախված է մեր ու մեր ընտանիքների բարոյական վիճակից: Իսկ թե ինչպիսին է մեր հայրենիքն այսօր, կարծում եմ նկարագրելու կարիք չկա...

ՍԵՐՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ Է ԵՎ Է ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն բարոյականության ու հոգևոր բարձր վիճակի սկիզբը Սերն է: Հանուն Սիրո հաստատման Աստված մարմնացավ, մարդկանց մեջ շրջեց որպես կատարյալ մարդ, որպեսզի Սերն արթնացնի նրանց սրտերում: Նա երկնքի արքայությանն արժանի համարեց նրանց, ովքեր զուցե և չզիտեին ոչ մի օրենք, բայց իրենց սրտերում կրում էին այն վեհ Սիրո կրակը, որն անշունչ քարերից անգամ Աբրահամի որդիներ կարող է հանել: Ուրեմն վերջում խոսեցրեք ամենակարևորի՝ Սիրո մասին, որի ամբողջական մարմնացումը մեր Տեր Հիսուս Քրիստոսն էր:

Ինչպիսի՞ն է մարդկային և աստվածային սիրո փոխհարաբերությունը: Արդյո՞ք մարդկային սերը խոչընդոտ է աստվածայինին, թե՞ մարդկային սիրո ընդունակությունը աստվածային Սիրո նշան է:

Սերը համընդհանուր ուժ է, այն գոյություն ունի ինքնուրույն, նրա շարժումներն ազատ են և անկախ այն իրագործողից: Այն արտահայտվում է ամենուր, որտեղ էլ ընկալողունակություն, արտահայտվելու հնարավորություն գտնվի:

Այն, ինչ մենք սեր ենք կոչում և նրա մասին մտածում ենք ինչպես սեփականի կամ անհատականի, դա միայն այդ համընդհանրական ուժի արտահայտման ու դրսևորման մեր հնարավորությունն է: Մարդիկ մտածում են, թե իրենք հանկարծ սիրահարվեցին, նրանք զգում են, որ իրենց սերը գալիս և աճում է, հետո հանկարծ թոշնում, կամ հնարավոր է, մի քիչ ավելի շարունակվում նրանց մոտ, ովքեր ունակ են նրա տևական շարժմանը: Բայց իրենց սեփական ապրումի զգացումը հենց իրենց պատրանքն է: Իսկ Սերը համընդհանրական ամենագո ծովի ալիքն է: Անձնական սերը սահմանափակված է: Բայց չի կարելի նսեմացնել այն նշանակությունը, որ նա ունի մարդու համար, մոլորության մեջ չպետք է ընկնել այն խաբուսիկ մտքով, թե նրանից վեր կարելի է բարձրանալ՝ նրա վեհացնող ազդեցությունն արհամարհելով: Միայն անձնական սերը կատարելագործելով կարելի է բարձրանալ դեպի Տիեզերական Սիրո հավիտենականություն, որպեսզի նա կարողանա հորդել հոգու մեջ:

Սերը համընդհանուր և հավիտենական է, այն միշտ իրեն արտահայտում է և միանում իր էության մեջ: Դա աստվածային ուժ է, իսկ այն այլասերումները, որոնք մենք նկատում ենք մեր շրջապատում, պատկանում են արտահայտման միջոցին: Սերն արտահայտվում է ոչ միայն մարդկային էակների մեջ, այլև ամենուր: Այդ հսկա և աստվածային ուժի աղավաղումները տեղի են ունենում միջոց հադիսացողի անգիտությունից ու եսամոլությունից: Սերը, հավիտենական ուժ լինելով, չունի ո՛չ հակումներ, ո՛չ տեմչանքներ, ո՛չ տիրապետման ծարավ, ո՛չ ֆիզիկական կապվածություններ. նրա մաքուր շարժման մեջ իրականացվում է ես-ի, աստվածայինի հետ միավորման փնտրումը՝ բացարձակ անկախ ամեն ինչից: Աստվածային Սերն ինքնակամ տրվում է և փոխարենը ոչինչ չի պահանջում: Մենք չենք խոսի այն մասին, թե մարդիկ ինչի են վերածել այն: Այն փոխակերպվել է անօրեն ու վանող երևույթի: Բայց համեմայն դեպս մարդկային էությանը Սիրո առաջին հպումն ինչ-որ բան բերում է իր առավել մաքուր էությունից, մարդը մի պահ իրեն մոռանալու ընդունակ է դառնում, Սիրո աստվածային հպումը մարդու մեջ մի պահ արթնացնում է ամենն ինչ որ կա՝ գեղեցիկ և նուրբ: Բայց հետո մարդկային բնությունից մակերես են լողում ինչ-որ բանի փոխադարձ պահանջի զգացումը, այն բանի վաճառքը, ինչ նա տալիս է, արտաքին բավարարումների ձգտումը և այլ ցածրակարգ երևույթներ, որոնք ավերում են ու կեղտոտում այն ամենը, ինչ աստվածային է զգացման մեջ: Բայց ինքնամոռացության այդ ուժը առանց որևէ սահմանափակումների կատարելու, ոչինչ չխնայելով, ոչինչ որպես փոխհատուցում չխնդրելով, որպես շնորհ, ամբողջությամբ իրեն նվիրելու ունակություն է, որի վառ օրինակը մարդկության համար Աստծո Միածին Որդու անմնացորդ զոհաբերումն է, ափսոս այս երանելի զգացումը քիչ է ծանոթ մարդկությանը: Այս

առիթով հարկ է հիշել եփեսացիներին հղված Պողոս առաքյալի հետևյալ պատգամը. «Մարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց Եկեղեցին և Իր Անձը մատնեց նրա համար, որ այն սրբացնի Ավագանի մաքրությամբ՝ Խոսքով, որպեսզի նա իր առաջ կանգնեցնի փառավոր Եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղություն կամ նման բաներից ոչինչ չունենա, այլ լինի սուրբ և անարատ» (Եփես. 5: 25, 28):

«Արդ կատարյալ եղեք դուք, ինչպես և ձեր Երկնավոր Հայրն է կատարյալ»: (Մատթ. 5. 48):

Իսկ ինչպե՞ս վարվել, ի՞նչ անել: Պողոս առաքյալն այս հարցին որպես պատասխան ասում է. «Նմանվեցեք ինձ, ինչպես որ ես Քրիստոսին» (Ա Կորնթ. 11:1): Իսկ եփեսացիներին ուղղված նամակում գրում է. «Նմանվեցեք Աստծուն, որպես սիրելի զավակներ, և ընթացեք սիրով, ինչպես որ Քրիստոս սիրեց մեզ և Ինքն Իրեն մատնեց մեզ համար որպես պատարագ և զոհ Աստծուն՝ անուշ հոտով: Այս իմացեք, թե ամենայն պոռնիկ կամ պիղծ կամ ազահ, այսինքն կռապաշտ, Աստծո արքայության մեջ ժառանգություն չունի» (Եփես. 5: 1,2,5): Իսկ սաղմոսերգուն ավետում է. «Խոնարհ հոգին է պատարագն Աստծու, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում» (Սաղմոս 50:19):

Նյութի աշխարհում աստվածային Սիրո դրսևորումը, մեծ ինքնաժխտմամբ, բարձրագույն զոհաբերության փաստ է: Աստվածայինն իր կամքով ընկղմվեց մարդկային մեջ, որպեսզի նրա խավարի խորքերում աստիճանաբար արտահայտվի գիտակցության աստվածային ուժը՝ ողջ դրսևորված տիեզերքն աստվածային գիտակցության ու աստվածային Սիրո արտահայտություն դարձնելու համար: Սիրո ուժն առնչվում է միլիոնավոր միջոցների հետ՝ նրանց միջոցով դրսևորվելու համար: Նրա մշտական առնչությունները միջոցներին ընկալողունակ է դարձնում, և մի անգամ նրանց մեջ կգարթնի ինքնաժխտման կարողությունը՝ Սիրո ապրումը: Երբ արևը մայր է մտնում, և ամեն ինչ լռում է, մի րոպե մստեք և աշխատեցեք միանալ բնության հետ, դուք հանկարծ Սիրո ուժեղ ձգտում և լույսի պապակ ծարավ կզգաք, ձգտում դեպի ինչ-որ բան, որ լույս է բերում, երջանկություն է պարգևում: Այստեղ առաջ է գալիս այնպիսի մաքուր և ուժեղ ծարավ, որ եթե դուք ի վիճակի լինեք զգալ բնության ներդաշնակությունը, ապա ձեր էությունն էլ կբարձրանա աղոթքի մեջ:

Եթե մարդ փոխհարաբերության մեջ մտնի այդ հսկա, մաքուր, աստվածային ուժի՝ Սիրո հետ, եթե մարդ դա զգա զոհն մի կարճ ակնթարթ և նույնիսկ ամենաթույլ աստիճանում, նա կհասկանա, որ այնպիսի թշվառ երևույթը, ինչպիսին մարդկային տենչանքն է, ծագել է հենց իրենից: Այն վեհ զգացումը մարդկային բնության մեջ դարձել է ինչ-որ ստոր, կոպիտ, եսամոլական, վայրի, տձև, կամ ընդհակառակը՝ թույլ ու սենտիմենտալ, չնչին զգացումներից ստեղծված, մակերեսային ու խստապահանջ: Եվ այս ստորությունն ու կոպտությունը, եսամոլական թուլությունը շատ հաճախ Սեր է կոչվում: Մի՞թե աստվածային Սիրուն վիճակվում է ինչ-որ սահմանափակ գործելու հնարավորություն, այսինքն այն սահմանափակված է աննյութական ուղորտով:

Աստվածային Սերն իր դրսևորմամբ երկրի վրա թափանցում է նույնիսկ ամենանյութական երևույթների մեջ, և, իհարկե, մարդկային գիտակցության եսամոլական այլասերման մեջ: Ո՛չ շարժում, ո՛չ զարգացում առանց Սիրո զգացման հնարավոր չէ. բայց քանի որ բնության այդ ուժը գարշելիորեն խեղաթյուրվել է, ոմանք ենթադրում են, որ այն ամբողջությամբ անհետացել է:

Աստվածային Սերը, որի մասին մենք խորհում ենք, Սեր է, որը դրսևորվում է այստեղ, ֆիզիկական աշխարհում, նյութի մեջ, բայց այն պետք է մաքուր մնա մարդկային այլասերումներից, այլապես այն, ինչ վսեմ է, լքում է մարդուն և վերջինս մնում է իր պատրանքների հետ:

Եթե մարդկային սիրո պատմության մեջ մաքուր Սիրո զոհն մեկ հյուլե մտնի և կարողանա առանց այլասերումների դրսևորվել, ապա նա կզտնի ճշմարիտ ու հիանալի երևույթը: Եվ եթե այդ շարժումը երկար չի տևում, ապա այն պատճառով, որ մարդը չի գիտակցում իր սեփական փնտրումի իրական նպատակը: Մարդը չի իմանում, որ սերը ոչ միայն երկուսի միացումն է, այլ աստվածայինի հետ, բոլոր էակների միավորման միջոցը:

Սերը բարձրագույն ուժ է, որ Բարձրեալն իրենից հղում է մարդկային մթագնած աշխարհի, որպեսզի այդ աշխարհն ու իր բնակիչներին վերադարձնի դեպի աստվածայինը: Նյութական աշխարհն իր մթության ու տգիտության մեջ մոռացել է աստվածայինը: Սերը գալիս է մթության մեջ, որպեսզի արթնացնի այն ամենը, ինչ քնել է այնտեղ: «Այդ լույսն էր ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ: (Հովհ. 1:9), «Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, և տեսանք նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս Միածնին՝ լի շնորհով ու ճշմարտությամբ» (Հովհ 1:14):

Եթե կա մի բան, հանուն որի կարելի է ապրել ու արթուն մնալ, Սերն է: Եվ Սիրո զարթոնքով էլ աշխարհ է մտնում աստվածայինին վերադառնալու հնարավորությունը: Այս աշխարհը մեռած նյութի աշխարհ կլիներ, եթե աստվածայինը չիջներ նրա մեջ և կյանքի չկոչեր նրան: Եվ աշխարհը հենց այն ժամանակից կյանքի կոչվեց այդ աստվածային ակունքի փնտրումով, բայց գնաց տարբեր ուղիներով և մինչև այժմ էլ դեգերում է: «Նա աշխարհի մեջ էր, և աշխարհը նրանով եղավ, սակայն աշխարհը նրան չճանաչեց» (Հովհ 1:10), «Նա, որ ի վերուստ է գալիս, վեր է ամենքից. նա, որ այս երկրից է, երկրավոր է և երկրավոր բաների մասին է խոսում: Նա, որ երկնքից է գալիս, վկայում է, ինչ որ տեսել ու լսել է, սակայն նրա վկայությունը ոչ ոք չի ընդունում» (Հովհ. 3. 31,32): «... Լույսը եկավ աշխարհի, սակայն

մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան լույսը... Իսկ ով կատարում է այն, ինչ ճշմարիտ է, գալիս է դեպի լույսը, որպեսզի նրա գործերը հայտնի լինեն, թե Աստուծով կատարվեցին» (Յովհ 3. 19, 21) և մարդկության միակ ձեռքբերումն այն է ինչ իր բարձրագույն ձևում սեր է կոչվում երեխայի նկատմամբ մայրական մաքրագույն սիրո տեսքով:

Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք
Երկուսն էլ անցվոր, երկուսն էլ պատրանք
Եվ եթե հաստատուն մի բան կա անմահ,
Արդյոք իմաստուն հոգին չի՞, միայն նա,
Որ թե հարթմնի և թե երազում
Ապրում է, տեսնում, զգում ու հուզվում
Եվ էսպես անվերջ էսօր ու երեկ
Փոփոխվում են, միայն միշտ մնում է մեկ
Մեկ մեծ ժամանակ: Էսպես էլ հոգին,
Փոփոխվում է միայն կեղևն արտաքին:
Մարմինն էսօրվան օրին մնանակ,
Իսկ ինքը անվերջ ինչպես ժամանակ:
Եվ ի՞նչ է Սիրո իմաստը վերին,
Ինչ երջանկության խորհուրդը խորին,
Հավել՛լ, միանա՛լ
Իրեն մոռանալ:

(Յովհաննես Թումանյան)

Կարծում են, համաձայն եք միտքն ամփոփել Հիսուսի խոսքերով, որովհետև Սիրո թեման տիեզերական է և նրա պես անձայր, և միայն Հիսուսի խոսքերը կարող են այն ամփոփել, քանզի օժտված են հավիտենականությանը որպես անապականորեն մարմնացած աստվածային Սիրո վսեմ արտահայտություններ: Ուրեմն հիշենք, թե ինչ պատգամեց մարդկությանը որպես «Նոր պատվիրան».

«Նոր պատվիրան են տալիս ձեզ, որ սիրեք միմյանց. ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ միմյանց սիրեցեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք Իմ աշակերտներն եք» (Յովհ. 13: 34-35):

«Եթե մեկը սիրում է Ինձ, Իմ խոսքը կպահի, և Իմ Հայրը նրան կսիրի, և Մենք նրա մոտ կգնանք ու նրա մոտ կօթևանենք: Եվ ով Ինձ չի սիրում, Իմ խոսքը չի պահում, և Իմ խոսքը, որ լսում եք, Իմը չէ, այլ՝ Հորը, որ ինձ ուղարկեց» (Յովհ. 14: 23-24):

ԸՆՏԱՆԻՔԸ ԱՍՏՎԱԾԱՅԻՄՆ ԱՆՔԱԿՏԵԼԻ ՄԻԱՍՆՈՒԻԹՅՈՒՆ Է

«Մի կարծեք, թե եկա խաղաղություն հաստատելու երկրի վրա. չեկա հաստատելու խաղաղություն, այլ սուր. քանի որ եկա, որ բաժանեմ որդուն իր հորից, և դատերը՝ իր մորից և հարսին իր սկեսուրից: Մարդու թշնամիները իր տնեցիները կլինեն: Ով իր հորը և կամ իր մորը Ինձնից ավելի է սիրում, ինձ արժանի չէ, ով իր որդուն կամ իր դստերը Ինձնից ավելի է սիրում, ինձ արժանի չէ» (Մատթ. 10: 34, 35, 36, 37):

Սիրելի երիտասարդ՝ տարեկից և ավագ քույրեր ու եղբայրներ, ամուսնությունն աստվածային խորհուրդ է և վերոհիշյալ բաժանումների չենթարկելու համար, պետք է լինի բացարձակին ձգտող մաքրությամբ ու մեր Տիրոջով: Քանի որ ասվեց. «Ինչ որ Աստված միացրեց մարդը թող չբաժանի» (Մատթ. 19. 7):

Առավել ևս Աստված չի բաժանի Իր միացրածը, եթե այն գործի ի բարօրության աստվածայինի, և ինքնաայլատերման պատճառով անօրինական չհամարվի, քանի որ անօրինականության սահմանները շատ ոլորուն են:

Ի՞նչ եք կարծում, անօրինական չէ՞ արդյոք այն ընտանիքը, որտեղ մոլություններով տարված ծնողները թունավորում են անմեղ մանուկների կյանքը: Օրինակ՝ երբ ալկոհոլի կամ նիկոտինի ազդեցությունից խեղաթյուրվում կամ արդեն այդպես են ծնվում մեր երեխաները: Խեղաթյուրումներն իհարկե տարբեր բնույթի են և աչքի համար տեսանելի, կամ անտես: Մի՞թե այս է մեր սիրո դրսևորումը մերձավորի նկատմամբ:

«Սպանեցե՛ք ուրեմն ձեր երկրավոր անդամները. հեռու գցեցե՛ք պոռնկություն, պղծություն, հոռի կրքեր, չարիքի ցանկություն և ագահություն, որ կռապաշտություն է: Դրա համար ըմբոստության որդիների վրա կգա Աստծո բարկությունը» (Կող. Գ 5-6): «Աղաչում են ձեզ, եղբայրներ՝, գթությամբ Աստուծո, որ պատրաստեք ձեր մարմինները որպես պատարագ կենդանի, սուրբ, հաճելի Աստծուն. այդ է ձեր բանական պաշտամունքը: Եվ այս աշխարհի

կերպարանքով մի՛ կերպարանվեք, այլ նորոգվեցեք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք բարին և թե՛ ի՞նչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը» (Ռոմ. ԺԲ 1-2): «Եվ ամեն ինչ, որ անեք խոսքով և գործով, բոլորն արեք հանուն Տեր Չիսուսի, գոհություն մատուցեցեք նրանով Աստծուն և Յորը» (Կող. Գ 17):

Սիրենք մեր մերձավորներին՝ նրանց մեջ Արարչի նմանողությունը տեսնելով, և ընտանիք կազմենք՝ մեր ընտանիքը Տիրոջ անվան համար միավորման վերածելով, որպեսզի այն անպտուղ ծառի չնմանվի ու կրակը չզգվի: Քանզի նաև ասվեց. «Դարձյալ ձեզ ասում եմ. եթե ձեզմից երկուսը միավորվեն երկրի վրա որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կկատարվի նրանց համար Իմ Յոր կողմից, որ երկնքում է. որովհետև ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով, այնտեղ եմ ես նրանց մեջ» (Յովհ. 13.22222222 34-35):

Ասելը հեշտ է, անելը՝ դժվար: Դիմել ամբողջ սրտով, նշանակում է սիրել: Այնտեղ, ուր կա ճշմարիտ Սեր, կասկածին տեղ չկա: Նույնիսկ եթե ինչ-որ բան պարզ չէ, սիրողը չի դատի: Այնտեղ, որտեղ կարող է դատապարտություն ծնվել, Սերը լիարժեք չի եղել:

Մեծ իրարանցումների օրերին զգացման մեջ կիսաչափանիշ լինել չի կարող: Յարկավոր է միավորվել այնպես, որ ամենափոքրիկ ճեղքվածք անգամ չմնա: Թշնամական ուժերը բնադրում են ճեղքվածքներում: Թույնը վնասում է ճաքճաք ծածկույթները: Նույնիսկ առաքինությունները վերածվում են մոլությունների, երբ Սերը չէ նրանց դրսևորման ու իրականացման մղիչ ուժը:

«Ուրախ եղեք միշտ, անդադար աղոթեցե՛ք, ամեն ինչում գոհություն մատուցեք, որովհետև ա՛յս է Աստծո կամքը ձեզ համար ի Քրիստոս Չիսուս: Մի՛ հանգցրեք Յոգին, մի՛ արհամարհեք մարգարեությունները, քննեցե՛ք ամեն ինչ, բարին ամուր բռնեցեք, հեռո՛ւ մնացեք բոլոր չար բաներից» (Ա Թեսաղ. 5.17-22):

«Քանզի, եթե կամավոր կերպով եմք մեղանչում ճշմարտության գիտությունն ստանալուց հետո, ուրեմն մեղքերի համար այլևս պատարագ անել միտք չունի. այլ Դատաստանի ահեղ սպասումը և կրակի կատաղությունն է, որ լափելու է հակառակորդին» (Եբր. 10: 26-27): «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը (մարդկանց), որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը. որովհետև Աստված իր Որդուն չուղարկեց աշխարհի, որ դատապարտի աշխարհը, այլ՝ որպեսզի աշխարհը նրանով փրկվի: Ով Նրան հավատում է, չպիտի դատապարտվի, և ով Նրան չի հավատում, արդեն իսկ դատապարտված է, քանի որ Աստծու Միածին Որդու Անվանը չհավատաց: Եվ դատաստանը այսպե՛ս իսկ է. որ Լույսը եկավ աշխարհի, սակայն մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան Լույսը, որովհետև իրենց գործերը չար էին» (Յովհ. 3.16-19):

Սեր զենքը կատարյալ Սիրո մեջ է: «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար »(Յովհ. 15.13)

ՀԱՎԵԼՎԱԾ

«... Դատերս ողջախոհությունն ինձ համար ավելի թանկ է կյանքից ու սեփական փառքից»

Ա. Վ. Սուվորով

Կենտրոնական Չետախուզական Վարչության նախկին տնօրեն Ալլեն Դալլեսը 1953-1961թթ-ին նախկին ԽՍՀՄ-ի վերաբերյալ ամերիկյան հետպատերազմյան բանաձևը այսպես է ձևակերպել. «Մենք բոլոր ուժերը կենդանեք հանուն մարդկանց ապուշացման... Գործողությունների հերթականությամբ կկայացվի երկրի ամենաանհնազանդ ժողովրդի վախճանի ողբերգությունը... Սկսենք... Մարդկային գիտակցության մեջ մտցնել սեռի (սեքս), բռնության, դաժանամոլության, դավաճանության պաշտամունքը: Ժողովրդի ղեկավարման ոլորտում քառս ու շփոթություն ստեղծենք... Արդարությունն ու օրինավորությունը ծաղրի կենթարկվի և կղաղարեն պետքական լինելուց... Կպաշտվի զոռեկությունն ու լստիությունը, կեղծիքն ու խաբեությունը, հարբեցողությունն ու թմրամոլությունը... դավաճանությունը, ազգայնամոլությունը և ազգամիջյան թշնամանքը: Արմատախիլ անենք հոգևորը, ոչնչացնենք ժողովրդական բարոյականության հիմունքները: Յիմնական կողմնորոշումը կատարենք երիտասարդության հանդեպ, սկսենք քայքայել, ավերել, պղծել այն, նրանց դարձնենք ցինիկներ, ճղճիմամիտներ, աշխարհաքաղաքացիներ (կոսմոպոլիտներ): Ահա այսպիսով էլ դա մենք կիրականացնենք»:

Ազգաբնակչության հարցերով զբաղվող ՄԱԿ-ի «Հռոմեական ակունքը» վճեց, որ 2010թ. Ռուսաստանում կմնա 50 մլն մարդ: Իսկ ազգաբնակչության մասին 1997թ.-ի Կորեական կոնֆերանսում հնչեց. «... Այս մոլորակի վրա մաքուր օդը, ջուրը, հողը և այլ բնական պաշարները բավարար չեն, որպեսզի պահպանվեն միլիոնավոր չինացիները, ինդոնեզերը, մեքսիկացիները և ռուսները...»:

Նյույեմբերգյան գործընթացի նյութերում պահպանվում է հետևյալ փաստաթուղթը. «Անհրաժեշտ է մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության, գրքերի ու դասախոսությունների միջոցով ռուսների գիտակցության մեջ մտցնել, որ մի քանի երեխա ունենալը վնասակար է»: Հարկավոր է մատնանշել երեխաների հետ կապված ծախսերը և այլն. որ այդ փողերը կարող են ծախսվել հանուն լավ իրերի ձեռքբերման: Պետք է խոսել ծննդաբերությունների մասին որպես կնոջ առողջությունը վնասող երևույթի: Այս պրոպագանդային զուգահեռ պետք է հակաբեղմնավորիչների լայնածավալ միջավայր ստեղծվի և հակաբեղմնավորիչների արտադրություն կազմակերպվի: Ոչ հակաբեղմնավորիչների տարածումը, ոչ աբորտների կատարումը հետապնդման ենթարկել չի կարելի... Հարկավոր է պրոպագանդել կանավոր ամուլացումը» (Բեռլին 1942):

Այս փաստաթուղթն անվիճելիորեն ապացուցում է, որ այնպիսի կազմակերպությունները, ինչպես «Ընտանիքի ծրագրավորման միջազգային ֆեդերացիան», «Ընտանիքի ծրագրավորման ռուսական ասոցիացիան», «Ռուսաստանի կանայք», «ԱՄՆ-ի միջազգային զարգացման դեսպանությունը», որոնք գործում են նախկին Խորհրդային տարածքում և ֆինանսավորվում ՄԱԿ-ի ազգաբնակչության ֆոնդից, Մշակութային արժեքների պահպանման Եվրոպական կազմակերպության (ԲՒՆԵՎ) և Միջազգային արտարժույթային ֆոնդի, առողջապահության միջազգային կազմակերպության, համաշխարհային բանկի, ազգաբնակչության ինստիտուտի կողմից, իրականացնում են ֆաշիստական օկուպանտների քաղաքականությունը: Մեր ժամանակներում չհայտարարված պատերազմ է մղվում, որտեղ քիմիաբակտերիոլոգիական և միջուկային զենքերից ոչ պակաս արդյունավետ միջոցներ են կիրառվում, որոնք բնակչության ոչնչացման դեմ են ուղղված: «Շերիմզ», «Օրգանոն», «Ջոնսոն և Ջոնսոն», «Պրոտեր & Գեմբլ», «Ռուսաստանի կանայք» և այլ ֆիրմաներ, որոնք հսկայական եկամուտներ ունեն 800% շահույթ բերող պոռնոբիզնեսից, Ռուսաստանը հակաբեղմնավորիչների վաճառքի և աբորտների տեսակետից դիտում են որպես եկամուտի հսկայական շուկա: Դրա համար էլ նրանց կողմից ֆինանսավորվող կազմակերպությունները հասնում են Ռուսաստանի երիտասարդության պղծման իրականացմանը, նրան իրենց արտադրանքի սպառողը դարձնելով: Սեռա-արտադրությունը հիմնված է շուկայական շահագործման և սերնդագործելու մարդկային բնական ձգտումի այլասերման վրա:

Մարդուն պղծելը էկոնոմիկապես ձեռնտու է - մարդիկ որքան այլասերված այնքան ավելի եկամտաբեր կլինեն: Պոռնոբիզնեսի ազդեցիկ դեմքերից Ս. Ազարկովն իզուր չդարձավ սեռականի ձևավորման մասին դպրոցական ծրագրերի կազմող, իսկ ԻժԻՆ-ն ֆինանսավորվում է «Playboy» պոռնոգրաֆիական ամսագրի կողմից: Բազմաթիվ կազմակերպություններ դրամի միջոցով, և պաշտոնյաներ առնելու օգնությամբ պետական համակարգեր են թափանցում, և, Ռուսաստանի ժողովրդի բարոյական ու ֆիզիկական քայքայմանը նպաստող քաղաքականություն վարում: Այս քաղաքականության արդյունքներն ակնառու են. սրվել է ժողովրդագրության անվտանգության պրոբլեմը՝ մենք ոչնչանում ենք: Այդ ոչնչացման տեմպերը նույնն են ինչ քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ 1.5 մլն մեկ տարում (Ռուսաստանում): 1992թ.-ին հատվեցին մահացության ու ծնելիության բեկյալները՝ Ռուսաստանում մահացությունների թիվը գերազանցեց ծնելիության թվին, այս երևույթը «Ռուսական խաչ» անվանումն ստացավ: Սրա հետ մեկտեղ նվազեց կյանքի տևողությունը, որը վերջին տասնամյակում 64 տարվա է իջել կանանց մոտ և մինչև 57 տարվա տղամարդկանց մոտ: Հեռավոր արևելքից մինչև Կալինինգրադ, ողջ երկրի տարածքում ծրագրային վիրահատությունների միջոցով օրական տասնութ հազար չծնված երեխա է սպանվում: Հարյուր երեսուցորս երկրներում արգելված ուշ ժամկետների աբորտները Ռուսաստանում թույլատրվում են: Հայտնի են նման աբորտների կատարման նպատակով ծննդատներում կանանց նկատմամբ ճնշում գործադրելու դեպքեր: Վիժեցված երեխաներից անջատում են օրգաններ թանկարժեք դեղերի արտադրման համար: Այդ «բացառիկ հումքը» ԱՄՆ-ի նախագահ Քլինտոնի թույլտվությամբ ուղարկվում է Միացյալ Նահանգներ («Ազատություն» ռադիոկայանը այն նվեր է համարել ողջ երկրի համար): Կանացի կոնսուլտացիաներում և ծննդատներում այսպես կոչված ընտանիքի ծրագրավորման հզոր քարոզարշավ է տարվում, որը մեր բնակչության թվաքանակի կրճատման դեմ է ուղղված: Գիտությունը, բժշկությունը, Եկեղեցին միահամուռ վկայում են. մարդու կյանքն սկսվում է բեղմնավորման պահից – սա հաստատում են բոլոր երկրների գիտնականները: Կանացի ու տղամարդկային սեռական սաղմերի միաձուլման պահին ձևավորվում է անգյուտ (եզական), անկրկնելի մի բջիջ, որ 46 քրոմոսոմների հավաքածու է պարունակում, որը մարդկային անձնավորության գլխավոր հայտանիշն է: Սա տիեզերքի ամենաբարդ բջիջն է: Մարդու սեռը, հատկությունները, բնավորությունը, տարիքը, աչքերի ու մազերի գույնը, արյան կարգը, մատնահետքերը և այլն՝ այս ամենն արդեն սրա մեջ պարունակվում է և կյանքի ընթացքում միայն զարգանում է: Հղիության ցանկացած ժամկետում աբորտը երեխայի սպանություն է և մահացու վտանգ է ներկայացնում կնոջ այանքի ժամանակակից մակարդակը համապատասխանում է 60-ական թվականների կյանքին), իսկ ստրեսային իրավիճակները... մեր ժողովուրդը անելանելիությունից է կործանվում: վերակառուցման սկզբից մեզ օտարոտի բարքեր են պարտադրվում. «փողերը չեն բուրում», «յուրաքանչյուր ոք իր համար», «Բուլիվերը երկու հոգու չի դիմանա», «Գոյատևում է ուժեղագույնը»: Մեզ միայն երկու ուղի են առաջարկում. կամ վերադարձ դեպի կոմունիստական անցյալ կամ դեպի բարեփոխումներ, որոնք ավերում են երկիրն ու

կործանում ժողովրդին: Եվ ոչինչ չեն ասում երրորդի՝ ավանդական ռուսական պատմական ուղու մասին: Ժողովրդական հոգուց ջնջվում են կարեկցանքը, ողջախոհությունը, մերձավորին օգնելու ձգտումը, հայրենիքի հանդեպ սերը: Ռուս մարտիկներն ինչո՞վ էին տարբերվում գերմանական ասպետներից. նրանով, որ մարտնչում էին ի փառս Աստծո և հանուն սեփական հայրենիքի պաշտպանության՝ չփնտրելով սեփական փառքը: Ռուս զինվորը երբեք հանուն փողի չի պայքարել: Ավետարանում ասված է. «Ավելի մեծ սեր չկա քան այն, որ մեկն իր հոգին է տալիս իր հարազատների համար» (Չովի. 15.13): Եվ ռուսը հաղթում էր հայրենիքի հանդեպ իր հավատքով ու սիրով: Բայց այժմ ժողովրդի կենսականությունն ավերող արժեքների նոր համակարգ է արմատավորվում՝ եսանություն, մրցակցություն, շահախնդրություն, ազատ սեր, ձգտում դեպի հաճույքներ ամեն զնով: Միլիարդավոր դրամներ են ծախսվում մեր կյանքը սասանելու համար: Ընտանիքը հնացած հասկացողություն է հռչակվում, ցանկացած այլասերումները թույլատրելի են համարվում: Դպրոցներում սեռականի պարզաբանման առարկաներ են մտցվում: «Ճնշման»-ը և մանկական ամսագրերից «lool»-ը և «lool girl»-ը տասնմեկամյա երեխաների համար նկարագրող ձեռնարկներ են հրատարակում, որպես կյանքի նորմեր շնություն են քարոզում անչափահասության միջավայրում ի վնաս անմեղության: Իզուր չէր, որ 1998թ. ամռանը «lool»-ի փոխարեն քրեական գործ հարուցվեց Ռուսաստանի ֆեդերացիայի քրեական օրենսգրքի հոդվածի համաձայն (պոռնոգրաֆիկ նյութերի ապօրինի հրատարակություն): Անանուն հարցումների համաձայն Ռուսաստանում յուրաքանչյուր երրորդ տղան կցանկանար «Չափշտակող» (Ռեկետյոր) դառնալ, յուրաքանչյուր երկրորդ աղջիկը՝ զբաղվել մարմնավաճառությամբ: Անչափահասների արժեքային կողմնորոշումներն այսպիսին էին. առաջին տեղում սեքսն է, երկրորդ տեղում՝ փողը, երրորդ տեղում՝ նյութական բարենպաստ վիճակը: Պարտականությունն ու պատիվը 15-16-րդ տեղում են, վերջում հայրենիքն է: Ամուսնությունը սերնդի շարունակման կողմն ուղղված կարևորագույն մեխանիզմներից է, որ հաստատված է Աստծո կողմից: Մարդուն պատվիրան է տրված. «Աճեցեք և բազմացեք – լցրեք երկիրն ու տիրեք նրան» (Ծննդոց 1.28): Բայց Աստվածային օրենքի համաձայն ամուսնությունը պետք է լինի «ազնիվ ու կեղծին անհաղորդ»: Իսկ եթե մարմնական հարաբերության բնական ուրախությունը ինքնամպատակ է և երեխաները՝ խոչընդոտ, այդ դեպքում նման միությունը մեղքի աղբյուր է դառնում, կնոջ և տղամարդու միջև հարաբերությունը վայելքների մշտական փնտրտուքի է վերածվում, որը հակասության մեջ է մտնում մարդու բնության հետ և ավերում է այն: Սեռաբանները պնդում են, որ զսպումը (ժուժկալությունը) վնասակար է, սրանով արդարացնելով մինչամուսնական և արտամուսնական կապերը, անչափահասների սեռական կյանքը, պաշտպանելով այլասերվածների իրավունքները: Բայց նրանց կարծիքը հակասում է ազգային կյանքի հիմքերին և եկեղեցու կանոններին: Բոլոր պետություններում միշտ եղել են կործանումից իրենց պաշտպանող օրենքներ. այդ օրենքներից են՝ մինչ ամուսնությունը կուսության պահպանումը, ամուսնական կապերի սրբությունը, արքրոտի, այլասերումների ու մարմնավաճառության արգելումը՝ այն ամենն ինչ անբարյացկամության ու ազգի անհետացման է տանում: Երիտասարդները պետք է իմանան, որ իրենց մինչամուսնական զսպվածությունից և ամուսնական կյանքի մաքրությունից է կախված ոչ միայն երեխաների բարոյական ու ֆիզիկական առողջությունը, այլ և ազգի զենեֆոնդի առողջությունը: Սուրբ Գրիգոր Աստվածաբանն ասել է. «Շնացողը վերացնում է իր ցեղը»: Գիտնականների ենթադրությունները դա հաստատում են: Բժշկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Վլ. Բարաբաշն ասել է. «Սեր նախնիները ներքին զգացողության ճանապարհով իմացել են գենետիկայի էլեմենտար օրենքը. կնոջ կյանքի առաջին մտերմիկ կապը նրա ժառանգականության վրա հետք է թողնում մինչև իր կյանքի վերջը: Բանը միայն այն չէ, որ հորմոններ և ուժեղ ներգործող ֆերմենտներ են ներթափանցում օրգանիզմ, որոնք ժառանգականության մեխանիզմը փոխում են մինչև որդեծնության շրջանի վերջը: Նմանապես ուժեղ ստրեսային ազդեցություն է տեղի ունենում հոգեկանի, իսկ սրա միջոցով էլ կրկին գենետիկական ժառանգականության և ինունիտետի վրա: Պատահական կապի արդյունքում ծնված ցանկացած երեխա լիարժեք չէ և՛ գենետիկորեն, և՛ հոգեպես: Ոչ բարձր բարոյականության կնոջ հետ ամուսնությունը աղետալի է սերնդի համար: Մինչև ամուսնություն հարսի անմեղությունը պահպանելու նախնյաց սովորությունը ամենևին էլ միջնադարյան դատողություն չէ... դա գենետիկայի օրենք է: Առօրյա կյանքում այն ստուգված և խիստ պահանջով ամրագրված է. «Մի՛ շնանար»: Այժմ Ռուսաստանում 100 նորածններից 47-ը հիվանդ է ժառանգական հիվանդություններով: Միայն 3.5% երեխաներն են առանց հոգեբանական ու ֆիզիկական շեղումների ծնվում, ամուսնական զույգերի 20%-ն անպտուղ է: Մի՞թե սա ազգի կործանում չէ: Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի II-ն ասել է. «... անհրաժեշտ է իրերն իրենց անուններով կոչել, ասելով, որ սպանությունն սպանություն է, չարիքը՝ չարիք, մանուկների պղծումն ու այլասերումը հենց պղծություն ու այլասերում է: Եթե լռենք մեզ պարզապես կրնաջնջեն...»: 1996թ. ԱՄՆ-ի կոնգրեսը ընտանիքի ու ամուսնության պաշտպանության օրենք է ընդունել: Ամերիկյան օրենսդրության մեջ գրված է, թե պետության խնդիրը հասարակության ծաղկման ապահովումն է, որի հիմքում ընտանիքն է: Ամերիկացիները «ազատ հասարակության հրապույրը՝ ԴԱՎ (ՆԻՔԱ)՝-ի համաճարակի, թմրադեղերի, հանցագործությունների երկրաչափական պրոգրեսիայով աճը ճաշակելով՝ սեռական լուսավորման ծրագրերի փոխարեն իրենց մոտ սկսել են այնպիսի ավանդական արժեքների ամրակցում կիրառել, ինչպիսիք են ողջախոհությունը, անո_եմն աճեց ավելի քան հինգ անգամ: Երեխան այս այլասերման բեռը տանել չի կարող, այն փչացնում է նրա կյանքը և ավերում հոգեկանը: Մեզ մոտ միշտ կայուն արգելք է եղել նմանատիպ ինֆորմացիայի վրա և երեխաների մոտ երբեք մտերմիկ թեմաներով գրույցներ չեն

տարվել: Մեր հասարակության համար առանձնահատուկ վտանգ են ներկայացնում թմրադեղերը: Բանակային միջավայրում թմրադեղերի օգտագործման հետ կապված հանցագործությունների թիվն աճել է 31.5%-ով: Դեսանտային զորքերում այն աճել է 7 անգամ: Պաշտոնական վիճակագրության համաձայն «ասեղի վրա նստածները» Ռուսաստանում շուրջ 2 մլն են՝ 20 անգամ ավելի, քան 10 տարի առաջ: 100 զինակոչիկից զոնե մեկ անգամ թմրադեղեր օգտագործել են 44-ը: Ռուսաստանի պատմության մեջ կենդանի ծնողներով անապատանների թիվը երբեք այսպիսին չի եղել: Նրանք շուրջ 2.5 մլն են: Նախկինում, եթե երեխան որք էր մնում, նրան դաստիարակելու էին վերցնում ազգականները, իսկ երբեմն էլ ուղղակի հարևանները: Իսկ հիմա նոր կանոնադրությունը թույլատրել է օտարերկրացիների կողմից երեխաների որդեգրումը, չսահմանադրելով այն ծառայությունները, որոնք թերևս կարող են հետևել նրանց հետագա ճակատագրին: Հայտնի են դեպքեր, երբ այդ երեխաները ենթարկվել են սեռական այլասերումների, ծաղրի, հանվել են նրանց օրգաններն ու ջղերը:

Մահացության հիմնական պատճառը մեր ժամանակներում՝ սրտանոթային հիվանդություններն են: Եվ պատճառը աղքատությունը չէ (կյանքի ժամանակակից մակարդակը համապատասխանում է 60-ական թվականների կյանքին), իսկ ստրեսային իրավիճակները... մեր ժողովուրդը անելանելիությունից է կործանվում: Վերակառուցման սկզբից մեզ օտարոտի բարքեր են պարտադրվում. «փողերը չեն բուրում», «յուրաքանչյուր ոք իր համար», «Բոլիվերը երկու հոգու չի դիմանա», «Գոյատևում է ուժեղագույնը»: Մեզ միայն երկու ուղի են առաջարկում. կամ վերադարձ դեպի կոմունիստական անցյալ կամ դեպի բարեփոխումներ, որոնք ավերում են երկիրն ու կործանում ժողովրդին: Եվ ոչինչ չեն ասում երրորդի՝ ավանդական ռուսական պատմական ուղու մասին: Ժողովրդական հոգուց ջնջվում են կարեկցանքը, ողջախոհությունը, մերձավորին օգնելու ձգտումը, հայրենիքի հանդեպ սերը: Ռուս մարտիկներն ինչո՞վ էին տարբերվում գերմանական ասպետներից. նրանով, որ մարտնչում էին ի փառս Աստծո և համուն սեփական հայրենիքի պաշտպանության չփնտրելով սեփական փառքը: Ռուս զինվորը երբեք հանուն փողի չի պայքարել: Ավետարանում ասված է. **«Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. 15:13):**

Եվ ռուսը հաղթում էր հայրենիքի հանդեպ իր հավատքով ու սիրով: Բայց այժմ ժողովրդի կենսականությունն ավերող արժեքների նոր համակարգ է արմատավորվում՝ եսամոլություն, մրցակցություն, շահախնդրություն, ազատ սեր, ձգտում դեպի հաճույքներ ամեն գնով: Միլիարդավոր դրամներ են ծախսվում մեր կյանքը սասանելու համար: Ընտանիքը հնացած հասկացողություն է հռչակվում, ցանկացած այլասերումները թույլատրելի են համարվում: Դպրոցներում սեռականի պարզաբանման առարկաներ են մտցվում: «Ճաճաճիճիճի»-ը և մանկական անսագրերից «Cool»-ը և «Cool girl»-ը տասնմեկամյա երեխաների համար նկարագրող ձեռնարկներ են հրատարակում, որպես կյանքի նորմեր շնություն են քարոզում անչափահասության միջավայրում ի վնաս անմեղության: Իզուր չէր, որ 1998թ. ամռանը «Cool»-ի դեմ քրեական գործ հարուցվեց Ռուսաստանի ֆեդերացիայի քրեական օրենսգրքի 242 հոդվածի համաձայն (պոռնոգրաֆիկ նյութերի ապօրինի հրատարակություն): Ամանուն հարցումների համաձայն Ռուսաստանում յուրաքանչյուր երրորդ տղան և կցանկամար «Հափշտակող» (Ռեկետայր) դառնալ, յուրաքանչյուր երկրորդ աղջիկը՝ զբաղվել մարմնավաճառությամբ: Անչափահասների արժեքային կողմնորոշումներն այսպիսին էին. առաջին տեղում սեքսն է, երկրորդ տեղում՝ փողը, երրորդ տեղում՝ նյութական բարենպաստ վիճակը: Պարտականությունն ու պատիվը 15-16-րդ տեղում են, վերջում հայրենիքն է: Ամուսնությունը սերնդի շարունակման կողմն ուղղված կարևորագույն մեխանիզմներից է, որ հաստատված է Աստծո կողմից: Մարդուն պատվիրան է տրված.

«Աճեցեք և բազմացեք – լցրեք երկիրն ու տիրեք նրան» (Ծննդոց 1.28): Բայց Աստվածային օրենքի համաձայն ամուսնությունը պետք է լինի «ազնիվ ու կեղծին անհաղորդ»: Իսկ եթե մարմնական հարաբերության բնական ուրախությունը ինքնանպատակ է և երեխաները՝ խոչընդոտ, այդ դեպքում նման միությունը մեղքի աղբյուր է դառնում, կնոջ և տղամարդու միջև հարաբերությունը վայելքների մշտական փնտրտուքի է վերածվում, որը հակասության մեջ է մտնում մարդու բնության հետ և ավերում է այն: Սեռաբանները պնդում են, որ զսպումը (ժուժկալությունը) վնասակար է, սրանով արդարացնելով մինչամուսնական և արտամուսնական կապերը, անչափահասների սեռական կյանքը, պաշտպանելով այլասերվածների իրավունքները: Բայց նրանց կարծիքը հակասում է ազգային կյանքի հիմքերին և Եկեղեցու կանոններին: Բոլոր պետություններում միշտ եղել են կործանումից իրենց պաշտպանող օրենքներ. այդ օրենքներից են՝ մինչ ամուսնությունը կուսության պահպանումը, ամուսնական կապերի սրբությունը, աբորտի, այլասերումների ու մարմնավաճառության արգելումը՝ այն ամենն ինչ անբարյացակամության ու ազգի անհետացման է տանում: Երիտասարդները պետք է իմանան, որ իրենց մինչամուսնական զսպվածությունից և ամուսնական կյանքի մաքրությունից է կախված ոչ միայն երեխաների բարոյական ու ֆիզիկական առողջությունն, այլև ազգի գենոֆոնդի առողջությունը: Սուրբ Գրիգոր Աստվածաբանն ասել է. **«Շնացողը վերացնում է իր ցեղը»:** Գիտնականների ենթադրությունները դա հաստատում են: Բժշկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Վլ. Բարաբաշն ասել է. «Մեր նախնիները իմացել են գենետիկայի էլեմենտար օրենքը. կնոջ կյանքի առաջին մտերմիկ կապը նրա ժառանգականության վրա հետք է թողնում մինչև իր կյանքի վերջը: Բանը միայն այն չէ, որ հորմոններ և ուժեղ ներգործող ֆերմենտներ են ներթափանցում օրգանիզմ, որոնք ժառանգականության մեխանիզմը փոխում են մինչև որդեծնության շրջանի վերջը: Նմանապես ուժեղ ստրեսային ազդեցություն է տեղի ունենում հոգեկանի, իսկ սրա միջոցով էլ կրկին

գենետիկական ժառանգականության և իմունիտետի վրա: Պատահական կապի արդյունքում ծնված ցանկացած երեխա լիարժեք չէ և՛ գենետիկորեն, և՛ հոգեպես: Ոչ բարձր բարոյականության կնոջ հետ ամուսնությունը աղետալի է սերնդի համար: Մինչև ամուսնություն հարսի անմեղությունը պահպանելու նախնյաց սովորությունը ամենևին էլ միջնադարյան դատողություն չէ... դա գենետիկայի օրենք է: Առօրյա կյանքում այն ստուգված և խիստ պահանջով ամրագրված է. «Մի՛ շնանար»: Այժմ Ռուսաստանում 100 նորածիններից 47-ը հիվանդ է ժառանգական հիվանդություններով: Միայն 3.5% երեխաներն են առանց հոգեբանական ու ֆիզիկական շեղումների ծնվում, ամուսնական զույգերի 20%-ն անպտուղ է: Մի՞թե սա ազգի կործանում չէ: Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի II-ն ասել է. «... անհրաժեշտ է իրեն իրենց անուններով կոչել, ասելով, որ սպանությունն սպանություն է, չարիքը՝ չարիք, մանուկների պղծումն ու այլասերումը հենց պղծություն ու այլասերում է: Եթե լռենք մեզ պարզապես կբնաջնջեն...»: 1996թ. ԱՄՆ-ի կոնգրեսը ընտանիքի ու ամուսնության պաշտպանության օրենք է ընդունել: Ամերիկյան օրենսդրության մեջ գրված է, թե պետության խնդիրը հասարակության ծաղկման ապահովումն է, որի հիմքում ընտանիքն է: Ամերիկացիները «ազատ հասարակության հրապույրը» ՂԱԿ (ՆԻԷՅ)-ի համաճարակի, թմրադեղերի, հանցագործությունների երկրաչափական պրոգրեսիայով աճը ճաշակելով՝ սեռական լուսավորման ծրագրերի փոխարեն իրենց մոտ սկսել են այնպիսի ավանդական արժեքների ամրակայում կիրառել, ինչպիսիք են ողջախոհությունը, ամուսնությունն ու ժուժկալությունը, որոնց կայացման համար պետք է հրաժարվել սեռական սանձարձակությունից, ալկոհոլից, ծխախոտից ու թմրադեղերից: Այս ծրագրերի իրականացման համար տարեկան 50 մլն դոլար է հատկացվում: Եվ նրանք արդեն արդյունքի են հասել այն նահանգներում, որտեղ անչափահասներին առանց ծնողների գիտության բժշկի ներկայանալն արգելված է: Ոչ միայն արքայազների թիվն է կրճատվել, այլև անչափահաս աղջիկների հղիության դեպքերը նվազել են տասն անգամ: Ամերիկացիները վերադարձել են ավանդական ընտանիքի գաղափարին, որի գլխավոր դերը դաստիարակությունն է: Իսկ մենք ի՞նչ անենք: Թվում է թե ավերածություններն անշրջելի բնավորություն են ձեռք բերել և ոչինչ փոխել հնարավոր չէ: Բայց իրականում Ռուսաստանի ապագան մեզնից է կախված: Եթե մենք սիրում ենք հայրենիքը և ցանկանում ենք տեսնել ուժեղ ու ծաղկուն, անհրաժեշտ է վերածնունդ տալ այն հոգևոր ու բարոյական ավանդություններին, որոնց շնորհիվ այն դարձել էր Սուրբ Ռուսիա: Մինչև ամուսնությունը կուսության պահպանումը, ամուսնական հավատարմությունը, այլասերումների մերժումը, թմրամոլությունից, հարբեցողությունից, ծխելուց հրաժարումը պետք է մեր կյանքի սկզբունքները դառնան: Եվ Տերը կօգնի մեզ: Մեր հայրենիքի ապագան ոչ թե ինվեստիցիայից ու նոր տեխնոլոգիաներից է կախված, այլ ժողովրդի հոգևոր բարոյական պոտենցիալից՝ բարությունից, ազնվությունից, աշխատասիրությունից և հայրենիքի հանդեպ սիրուց, մերձավորների նկատմամբ անշահախնդրության հատկությունից: Ազգի հիմքն ընտանիքն է, որտեղ պահպանվում ու սերնդից սերունդ են փոխանցվում ազգային կյանքի ավանդույթները: Շատ երեխաներ՝ ամուր ընտանիք, կայուն պետություն: Ընտանիքը պահպանելով, երեխային դաստիարակելով մենք կփրկենք Ռուսաստանը: Եթե յուրաքանչյուր ոք պահպանի իր կնոջն ու երեխաներին, ապա երկրի վրա կդադարեն արքայազնի օրական միլիոնավոր (Ռուսաստանում օրական 8 մլն) երեխաներ սպանելուց: Երիտասարդները կսովորեն իրենց ապագան ընտանիքի մեջ տեսնել, այլ ոչ թե զուգընկեր փնտրելու. տղամարդիկ կաշխատեն պաշտպանել իրենց օջախն ու հայրենիքը, իսկ կանայք դաստիարակել երեխաներին: Այս ճանապարհով ցանկացած պետություն կգնա կատարելության:

Թարգմանաբար ներկայացնում ենք “ Ծàäïíàæ” շաբաթաթերթից (# 17-18. 1999)

**«Երբ իրիկունը գլուխներդ բարձին դնեք, որ քնանաք,
մի քիչ մտածեք ձեր ազգի մասին»:
(Անդրանիկ Օզանյան)**

Մեծ զորավարի համաժողովրդական թևավոր այս խոսքը արդիական է բոլոր ժամանակներում ու պիտանի բոլոր ազգերին: Հիրավի ամեն մի անհատի բարոյական պարտքն է, գոնե օրվա վերջում, իր բազմազբաղ մտքի հեռավոր մի անկյունում տեղ հատկացնել նաև իր ազգին: Ազգ, որի հարատևման համար շատեր իրենց կյանքն ընծայեցին: Արդ մենք էլ պարտավոր ենք սուրբ նահատակների արյամբ շաղախված և մեզ հասած այդ հողին խառնել մեր ճակատի քրտինքն ու մտքի խոնջանքը, որպեսզի ապաքինվի վիրավոր մայր հայրենիքը:

Այո՛, Հայաստանը կրկին կարժանանա Աստծո հայրախնամ հոգատարությանը՝ կդառնա «Երկիր դրախտավայր», որի հողը մարմին դառնալով՝ իր մեջ կրեց Աստծո կենարար շունչը, որտեղ կանգ առավ արդար Նոյի փրկարար տապանը, որի ժողովրդին Հայկ նահապետը փրկեց հեթանոս Բելից և որտեղ Ինքը՝ Միածին Աստվածորդին իջավ երկնքից իր սուրբ Եկեղեցին հաստատելու համար:

Գուցե ապագայի տեսիլքը շատ է մշուշվել և շատերն արդեն հուսահատվել են իսպառ, բայց պետք է իմանալ, որ «Իմաստուն մարդիկ չեն նստում իրենց վիշտը ողբալով, այլ իսկույն վշտի ճամփան են փակում» (Ֆիխտե) և «Երջանիկ է նա, ով որ ձախորդության միջից իր խոհեմությամբ անվնաս է դուրս գալիս» (Պլատոն): Թերևս կարծում եք այլևս ելք չկա, օ՛րջ, ամենաանելանելի վիճակից անգամ ամենաքիչը երկու ելք կա՝ տքնաջան աշխատանքը և հավատն առ Աստված: Եվ միակ փրկարար ելքը այս երկուսի համատեղումն է:

«Ինչքան անծուկ է դուռը և նեղ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ. 7. 14): Ու թերևս ամենացավալին այն է, որ այս նեղ ճանապարհի ոչ միայն գտնողները, այլև ընդհանրապես փնտրողներն են սակավաթիվ: Եվ տխուր մեր այս վիճակը ողբերգական ու աղետալի է նրանով, որ շատերս չենք գիտակցում մեզ կլանող ճահճային մղձավանջը: Իսկ ելք գտնելու գլխավոր պայմանը վիճակի բարդության լիարժեք գիտակցումն է:

Սույն գրքույկում մատնանշված մարդկային կենցաղի սև բծերը ընդհանուր են ողջ մարդկության համար և Ռուսաստանին ու ռուս ժողովրդին վերաբերող հոդվածը, որ տեղ գտավ այստեղ որպես հավելված, ըստ էության կործանարար անդունդին մոտեցող մի ամբողջ ժողովրդի՝ համամարդկային ընտանիքի ավագ անդամներից մեկի երկյուղալի ճիչն է:

Նախնյաց մոռացված սուրբ առաքինության վերականգնումի այս տազնապալի ազդակը բացարձակորեն ընդհանուր է նաև մեզ համար, որովհետև անհամեմատ փոքր լինելով՝ նույն չարիքից առավել խոցոտված ենք մենք: Աշխարհին հալածող ցավն այժմ մեզ էլ է պատել, և մենք էլ շատ մոտ ենք անողորմ գազանի գոհը դառնալուն:

Ոմանք կարող են անպատեհ կերպով կրկնել մեծ պոետի խոսքը, թե. «Մենք քիչ ենք սակայն մեզ հայ են ասում», բայց ավա՛ղ, մենք ոչ թե քիչ ենք, այլ սպառվում ենք ամենավտանգավոր «սպիտակ» ջարդից, և մեզ էլ հայ են ասում, ոչ թե մեր հայ լինելու, այլ պարզապես ուրիշներից տարբերելու համար, քանզի ուր է հայի մեր սուրբ նախնյաց գիտակցությունը, ուր է մեր հոգու զորավոր հայեցիությունը:

Երբ Ռուսաստանի նման, թե՛ տարածքային և թե՛ ազգաբնակչության առունով հզոր տերությունը, որպես դարձի եկած «անառակ որդի», փրկության սրտաճնլիկ աղերսանք է առաքում առ Աստված, որքան առավել ևս մենք կարիք ունենք այս հարցի մասին, ավելի քան լրջորեն խորհելու և կտրուկ քայլերի դիմելու:

Ոմանք էլ կարող են ասել. «Հոգ չէ, թե մարդիկ դադարում են Աստծուն սիրելուց, բավական է, որ սիրեն հայրենիքը և առաքինությունները»: Սա նշանակում է. «Հոգ չէ, թե

լեռնային աղբյուրները կցամաքեն, բավական է, որ ջուրը քաղաքի ջրանցքներում չպակասի»:

Նախկին (ԽՍՀՄ) հասարակարգում մեր հոգին նյութապաշտության ախտով վարակվեց, իսկ «կարմիր պարիսպների» փլուզումից հետո, ոչխարի մորթի հագած՝ այլասերումը մարմնավորող, արյունուշտ գայլեր խուժեցին ախտալուկ որսով հարուստ այդ անծայրածիր որսադաշտ և մինչև այժմ խժռում են իրենց անգետ զոհերին: Մենք ամեն օր մեծ ընտելությանը պատճենում ենք աշխարհի «քաղաքակիրթ» ու հետամնաց բոլոր ազգերի տարբեր ճանապարհներով (նորածնության տարբեր ոճեր, այլազան հեռուստասերիալներ, տարբեր հեռուստաֆիլմեր, կրոնական բազմաթիվ ուղղություններ ու աղանդներ և այլն) մեզ պարտադրված ամեն տեսակ պիղծ բարքերն ու խեղաթյուրող կենսաձևերը: «Եվ ահա եկել-հասել է ժամը, որ ամեն մի կեղտ կոչված բան հեռացնենք մեզնից ամենայն քաջությամբ: Մեծ գործերը արիություն են պահանջում, իսկ վախը նշան է թերահավատության. մերժենք մեզնից թերահավատությունը և նրա հետ վախն էլ թող փախչի մեր մտքերից ու խորհուրդներից: Աստծու սերն ավելի մեծ է, քան ամեն երկրավոր մեծություն. և մարդկանց աներկյուղ է դարձնում հրեշտակների անմարմին զորքերի պես: Այն մարդիկ, որոնք Աստծու սիրով, ինչպես զենքերով, սպառնազինված էին, ամենևին չխնայեցին և անարի վատսիրտների նման չվախեցան ո՛չ մահից, ո՛չ գուլքի հափշտակությունից... Նրանք բանի տեղ չդրին բոլոր չարչարանքները, միայն թե միաբան մնան Աստծու հետ, որպեսզի միմիայն Նրանից չմերժվեն, և Նրան իրենց մտքում գերադասեցին բոլոր տեսանելի մեծություններից» (Եղիշե):////

Եվ ի վերջո թույլ տվեք աներևույթ թշնամու դեմ ելնելու անխուսափելի այս կոչն ավարտել մեծն Վարդանի խոսքերով, որ նա արտասանեց՝ մահվան աչքերին աներկյուղ նայելով. «Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ. մանավանդ որ ձեզանից շատերը քաջությամբ ինձանից ավելի լավ եք... թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին: Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք. որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»: